



AGORA
CENTRAL EUROPE



**ՀՀ պետական բյուջեի սոցիալական պաշտպանության ծրագրերի պլանավորումն
ու իրականացումը.**

*2020-2024 թթ. փաստացի ցուցանիշների, 2025 թ. ընթացիկ կատարողականի և ԼՂ
տեղահանվածների սոցիալական ապահովման հիմնախնդիրների հետազոտության*

ԶԵԿՈՒՅՑ

2025 թվական

Սույն հրապարակումը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ազորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից իրականացվող «Բյուջետային վերլուծություն սոցիալական ոլորտում» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ն, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	7
ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ.....	11
Գլուխ 1.1 2020-2025 թթ. սոցիալական պաշտպանության ծրագրերի ցուցանիշների համեմատական վերլուծություն.....	13
Գլուխ 1.2 2020-2024թթ. Բյուջետային ծրագրերի կատարողականների գնահատում.....	22
ԳԼՈՒԽ 2. 2025 ԹՎԱԿԱՆԻ 9 ԱՄԻՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՅԻՆ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ և ՓԱՍՏԱՅԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	30
ԳԼՈՒԽ 3. ԼՂ-ԻՅ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.....	33
ԾՐԱԳԻՐ 1088 - ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ.....	36
ԾՐԱԳԻՐ 1098 - ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ.....	41
ԾՐԱԳԻՐ 1225 - ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՍԲԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ.....	47
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	56
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ.....	62
ՀԱՎԵԼ ՎԱԾՆԵՐ.....	66

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ - Ազգային ժողով

ԱՄՀ - Արժույթի միջազգային հիմնադրամ

ԱՍՀՆ - Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ԵՄ - Եվրոպական միություն

ԼՂ - Լեռնային Ղարաբաղ

ԾԲ - Ծրագրային բյուջե

ԿԳՄՄՆ - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Հազ. դրամ - հազար դրամ

ՀԲ - Համաշխարհային բանկ

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՀՆԱ - Համախառն ներքին արդյունք

ՄԺԾԾ - Միջնաժամկետ ծախսերի ծրագիր

մլն - միլիոն

մլրդ - միլիարդ

ՏԿԵՆ - Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՏՀԶԿ - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

ՖՆ - Ֆինանսների նախարարություն

ՊՈԱԿ - Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության սոցիալական քաղաքականության արդի օրակարգում առանցքային տեղ է զբաղեցնում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սոցիալական ներառման գործընթացը: Տեղահանված ընտանիքները բախվում են բազմաթիվ խնդիրների՝ բնակարանային ապահովումից և աշխատաշուկայում ինտեգրումից մինչև կրթական ու առողջապահական ծառայությունների հասանելիություն: Այս խնդիրների լուծումը ոչ միայն պարտավորություն է, այլև պետական առաջնահերթություն, քանի որ այն ուղղված է սոցիալական համերաշխության ամրապնդմանը, հասարակության կայունության ապահովմանը և երկարաժամկետ զարգացման հիմքերի ձևավորմանը:

Սոցիալական աջակցության ծրագրերի ֆինանսավորման գործում առանցքային է պետական բյուջեի դերը, որն ապահովում է ծրագրերի կայունությունն ու թիրախայնությունը: Հատկապես կարևոր է բյուջետային միջոցների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Բյուջետային թափանցիկության բարձրացումը թույլ է տալիս գնահատել ոչ միայն ծրագրերի արդյունավետությունը, այլ նաև ձևավորել հանրային վստահություն և մասնակցություն սոցիալական քաղաքականության մշակման և իրագործման գործընթացներում:

Զեկույցի նպատակը և շրջանակը

Սույն զեկույցը պատրաստվել է Հայաստանի Հանրապետությունում սոցիալական աջակցության ոլորտում իրականացվող բյուջետային ծրագրերի վերլուծության և մոնիթորինգի նպատակով՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կարիքներին ուղղված միջոցառումներին: Վերլուծությունը ներառում է ծրագրերի բովանդակային և քանակական ուսումնասիրություն, կատարողականի գնահատում, ինչպես նաև առկա խնդիրների վերհանում և դրանց լուծման ուղղությունների ձևակերպում:

Զեկույցի հիմնական նպատակն է բարձրացնել սոցիալական աջակցության ոլորտում իրականացվող բյուջետային ծախսերի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ապահովել հանրային վերահսկողություն՝ ձևակերպելով առաջարկներ համակարգային բարեփոխումների համար:

Զեկույցը միտված է խթանել բյուջետային թափանցիկությունը և հանրային մասնակցությունը սոցիալական աջակցության ոլորտում: Սա համահունչ է ծրագրի նախաձեռնության ընդհանուր նպատակին՝ նպաստել մասնակցային կառավարման ձևավորմանը և ապահովել ներառական, թափանցիկ բյուջետային գործընթացներ Հայաստանում: Այսպիսով, զեկույցը ներկայացնում է առկա իրավիճակի վերլուծությունը և հանդիսանում է որպես գործիք քաղաքականության մշակման և հանրային վերահսկողության համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Զեկույցի մշակման ընթացքում կիրառվել են համակցված մեթոդաբանական մոտեցումներ, որոնք հնարավորություն են տվել ստանալ ամբողջական պատկեր՝ թե՛ ծրագրային նպատակների, թե՛ ֆինանսական հատկացումների և դրանց իրականացման արդյունավետության մասին:

Տվյալների աղբյուրներ

Վերլուծությունը հիմնված է պետական մարմինների կողմից հրապարակված պաշտոնական փաստաթղթերի և վիճակագրական տվյալների վրա՝ հատկապես ՀՀ ֆինանսների նախարարության հրապարակած նյութերի: Հաշվի են առնվել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հրապարակումները, որոնք վերաբերում են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց խնդիրներին: Բացի այդ, լրացուցիչ տվյալներ ստացվել են կառավարությանն ուղղված պաշտոնական հարցումների միջոցով, ինչը հնարավորություն է տվել ապահովել ավելի ամբողջական պատկեր:

Զեկույցի բազմակողմանիությունն ապահովելու նպատակով իրականացվել են նաև որակական հարցումներ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց շրջանում՝ պարզելու համար պետական աջակցության ծրագրերից օգտվելու նրանց փորձառությունն ու առկա խնդիրները, որոնց բախվել են: Հարցումները հնարավորություն են տվել լրացնելու քանակական տվյալները և ավելի խորությամբ հասկանալու ծրագրերի իրական ազդեցությունը շահառուների շրջանում: Միաժամանակ իրականացվել է փորձագիտական հարցազրույց ԱՍՀ նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչների հետ, ովքեր իրականացրել են 2023-2024 թվականներին «Բնակարանային ապահովում» բյուջետային ծրագրի մշտադիտարկումն և գնահատումը: Փորձագիտական դիտարկումները ծառայել են որպես ինստիտուցիոնալ գնահատման աղբյուր՝ թույլ տալով համադրել շահառուների փորձառությունը ծրագրի իրականացման վարչարարական և քաղաքական տեսանկյունների հետ:

Որակական տվյալների համադրումը բյուջետային և կատարողական ցուցանիշների հետ հնարավորություն է տվել ձևավորելու փաստահեն եզրակացություններ և մշակելու

կիրառական առաջարկություններ՝ ուղղված ծրագրերի թիրախայնության, արդյունավետության և սոցիալական ազդեցության բարձրացմանը:

Հիմնական տվյալների աղբյուրները ներառում են.

- **ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենք**, որը պետական բյուջեն ամփոփող և ներկայացնող վերջնական փաստաթուղթն է և բխում է բյուջետային ուղերձից: Կազմվում է ՀՀ կառավարության կողմից՝ ՀՀ ՖՆ և մյուս գերատեսչությունների օժանդակությամբ և ընդունվում՝ ԱԺ կողմից¹:
- **ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ**, որտեղ ներկայացված են բյուջետային հիմնական տեղեկատվության պլանային, ճշտված և փաստացի մակարդակները՝ ըստ համապատասխան ժամանակահատվածի²:
- **ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր** - ներկայացնում է սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականությունների հիմնական ուղղությունները և կանխատեսումները, որոնք ընկած են պետական բյուջեի մշակման հիմքում: Կազմվում է ՀՀ կառավարության կողմից՝ ՀՀ ՖՆ և մյուս գերատեսչությունների օժանդակությամբ³:

Այս աղբյուրներն ապահովել են վերլուծության համար անհրաժեշտ իրավական, քանակական և որակական տվյալների ուսումնասիրման և մշակման հիմքը: Վերլուծության մեթոդաբանական մոտեցումները համահունչ են միջազգային շրջանակների հետ, մասնավորապես՝ ԵՄ-ի⁴, ԱՄՆ-ի⁵, ՏՀԶԿ-ի⁶ մեթոդաբանության և ՀԲ-ի⁷ սոցիալական ծրագրերի մոնիթորինգի ու գնահատման մոտեցումների հետ: Սա հնարավորություն է տվել ապահովել գնահատման գործընթացի համադրելիությունը միջազգային չափորոշիչների հետ:

Վերլուծության շրջանակներում ուսումնասիրվել են ոչ միայն 2024 թվականի փաստացի և 2025 թվականի պլանային բյուջետային ցուցանիշները, այլև 2025 թվականի առաջին ինն ամիսների կատարողական տվյալները: Վերջիններս հնարավորություն են

¹Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն: https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t

²Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն: https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t

³Աղբյուրը՝ ՏՀԶԿ. Բյուջեի վերլուծություն և մշտադիտարկում, էջ 12: <https://budgets.am/892.html>

⁴European Commission. (2021). *Better regulation guidelines*. Publications Office of the European Union.

European Commission. (2021). *Better regulation toolbox*. Publications Office of the European Union.

⁵International Monetary Fund.(2014). *Government finance statistics manual*.

⁶OECD. (2019). *Performance budgeting: A review of OECD countries*. OECD Publishing.

⁷World Bank. (2022). *Results-based financing for social protection programs*. World Bank Group.

տվել գնահատելու ծրագրերի իրականացման ընթացիկ առաջընթացը և վերլուծելու տարվա ավարտին պլանային ցուցանիշների իրացման հավանականությունը:

Բացի ֆինանսական ցուցանիշներից, դիտարկվել են նաև արդյունքային ցուցանիշները՝ հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանային և փաստացի մակարդակներով՝ գնահատելու դրանց համապատասխանությունը ծրագրերի նպատակներին: Ցուցիչները դասակարգվել են ըստ բնույթի՝ քանակական և որակական, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել ոչ միայն ծախսերի արդյունավետությունը, այլև դրանց սոցիալական ազդեցությունը շահառու խմբերի վրա:

Վերլուծության ընթացքում, իրականացվել են փորձագիտական հարցազրույց ԱՍՀՆ ներկայացուցչների հետ, որի ընթացքում քննարկվել են վերլուծության համար անհրաժեշտ հարցերի պարզաբանման հետ կապված հարցերը: Քննարկման ընթացքում ներկայացվել են վերջիններիս կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ կապված բնակարանային ապահովման ծրագրով գործող «Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության տրամադրում» միջոցառմանը: Ձեկույցում տվյալ միջոցառման վերլուծությունը ևս իրականացվել է:

Հետազոտության շրջանակներում իրականացվել են որակական հարցումներ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց շրջանում՝ նպատակ ունենալով բացահայտել պետական աջակցության ծրագրերից օգտվելու կամ չօգտվելու նրանց փորձառությունը, ընկալումները և առկա խոչընդոտները: Հարցումներն իրականացվել են կիսակառուցված հարցազրույցների ձևաչափով (semi-structured interviews):

Բյուջետային ծրագրերի ուսումնասիրման համար կիրառվել են և՛ բովանդակային, և՛ քանակական փոխլրացնող մեթոդներ:

Բովանդակային վերլուծության շրջանակներում ուսումնասիրվել են ծրագրերի ռազմավարական նպատակները և կոնկրետ միջոցառումները, ինչպես նաև վերհանվել են ծրագրային նպատակների և իրական շահառուների կարիքների համապատասխանությունը:

Քանակական վերլուծության շրջանակներում կատարվել է ֆինանսական հատկացումների ուսումնասիրություն, պլանային և փաստացի ծախսերի համադրում,

շահառուների քանակական ցուցիչների վերլուծություն, ինչպես նաև դիտարկվել է ծախսերի բաշխումն ըստ միջոցառումների:

Վերլուծության շրջանակներում առանձին ուսումնասիրություն է կատարվել նաև շահառուների գոհունակության և փորձառության մասով՝ կիրառելով որակական հարցման մոտեցումը: Այն հնարավորություն է տվել դիտարկել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց անձնական փորձը դիտարկվող երեք պետական աջակցության ծրագրերից օգտվելու մասով, ինչպես նաև անդրադառնալ այնպիսի հարցերի, ինչպիսիք են իրազեկվածությունն ու օգտվելու և/կամ չօգտվելու պատճառները:

Այս մոտեցումները հնարավորություն են տվել ոչ միայն գնահատել ծրագրերի պլանավորումն ու կատարողականը՝ ֆինանսական տեսանկյունից, այլ նաև դրանց ազդեցությունն ու ընդգրկվածությունը՝ սոցիալական տեսանկյունից:

Կատարողականի գնահատում

Ծրագրերի արդյունավետության և կատարողականի գնահատումն իրականացվել է պլանային և փաստացի ցուցանիշների համեմատությամբ, և ծախսերի արդյունավետության ուսումնասիրությամբ (հատկացված միջոցների և ձեռք բերված արդյունքների համաչափություն):

Ծրագրերի և դրանց համապատասխան միջոցառումների արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատելու համար կիրառվել է կատարողականի տոկոսային դասակարգման աղյուսակը: Այն հնարավորություն է տալիս ծրագրերն ու միջոցառումները խմբավորել ըստ իրականացման մակարդակի՝ **բարձր (≥ 90 տոկոս), բավարար (75-89 տոկոս), միջին (50-74 տոկոս) և անբավարար (< 50 տոկոս) կատարման շեմերով**: Այս մոտեցումն ապահովում է ծրագրերի արդյունավետության համաչափ և օբյեկտիվ գնահատում, ինչպես նաև թույլ է տալիս հստակ առանձնացնել այն ոլորտները, որտեղ պահանջվում է լրացուցիչ միջամտություն կամ բարելավում:

ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեն հիմնվում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի դրույթների վրա և ուղղված է այդ ծրագրով և ՀՀ կառավարության կողմից հաստատված ոլորտային ռազմավարություններով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1064-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2025-2027թթ. ՄԺԾԾ-ով սահմանված ՀՀ կառավարության նպատակների, առաջնահերթությունների և թիրախների ապահովմանը⁸:

2025 թվականի պետական բյուջեն եկամուտների գծով հաստատվել է 2,837.6 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 3,441.6 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով՝ 604 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի համապատասխանաբար 26.1, 31.5 և 5.5 տոկոսը: Ծախսային քաղաքականությունը կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում նախատեսում է լրացուցիչ նախաձեռնություններ և համակարգային բարեփոխումներ: Դրանք ուղղված են լինելու մարդկային կապիտալի արդյունավետ զարգացմանը և իրացմանը, իսկ պետական ենթակառուցվածքներում (կրթական և նախակրթական հաստատություններ, ճանապարհներ, ջրամբարներ և այլն) ներդրումներ իրականացնելու միջոցով ֆիզիկական կապիտալի կուտակմանը: Ծախսային քաղաքականության ևս մեկ կարևոր ուղղություն է պաշտպանական համակարգի ամրապնդումը, որի նպատակն է բարձրացնել երկրի դիմադրողականությունը հնարավոր ռիսկերի նկատմամբ:

2025 պետական բյուջեի շրջանակներում իրականացվող միջոցառումների հիմնական նպատակն է լինելու ապահովել տնտեսության մրցունակության և արտադրողականության աճը: 2025 թվականին ՀՀ կառավարությունը շարունակելու է թիրախավորել երկարատև բարձր տնտեսական աճի ապահովումը:

2025 թվականին, ՀՀ կառավարության ծրագրի առաջնահերթություններին համահունչ, իրականացվում են սոցիալական, կրթական, առողջապահական և ենթակառուցվածքային բնույթի մի շարք միջոցառումներ: Դրանք նպատակ ունեն

⁸ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, էջ 8:
<https://minfin.am/hy/page/petakan-byuje-2025t>

ապահովել մի շարք առանցքային թիրախների իրականացում՝ զուգահեռաբար նպաստելով նաև ոլորտային այլ գործընթացների իրագործմանը:

Սոցիալական պաշտպանությունը շարունակում է մնալ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Ըստ ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագրի սոցիալական պաշտպանության հիմնական նպատակներն են՝ երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը: Սոցիալական պաշտպանության ծախսերը պետական բյուջեում ներկայացված են համապատասխան բյուջետային ծրագրերի և միջոցառումների միջոցով, որոնք համակարգվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՄՀՆ) կողմից:

Սոցիալական քաղաքականության շրջանակում իրականացվող միջոցառումները բազմազան են և ընդգրկում են ընտանիքների սոցիալական աջակցությունը, երեխաների և բազմազավակ ընտանիքների խրախուսումը, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ապահովությունը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում և ճգնաժամային պայմաններում հայտնված անձանց աջակցությունը: Առանցքային թիրախներից են նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովումն ու սոցիալական ինտեգրումը, ինչպես նաև վաղ մանկության զարգացման համակարգի կատարելագործումը և նախադպրոցական ծառայությունների ցանցի հասանելիության ընդլայնումը:

Ժողովրդագրական քաղաքականության շրջանակում շարունակվում են ծնելիության խրախուսման և երիտասարդ ընտանիքների աջակցության ծրագրերը՝ նպատակ ունենալով բարելավել ժողովրդագրական ցուցանիշները և ապահովել բնակչության բնական վերարտադրությունը: Այս քաղաքականությունը հիմնվում է սոցիալական կարիքների գնահատման և նպատակային աջակցության տրամադրման սկզբունքի վրա՝ խրախուսելով սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Միաժամանակ, շարունակվում է Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների, սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցությունը: 17.10.2024 թվականի N 1641-Լ որոշմամբ⁹ ընդունվել է ՀՀ

⁹ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ: ՀՀ կառավարության որոշում:
<https://www.arlis.am/hy/acts/198573>

ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թվականների ռազմավարությունը, որի տեսլականն է ունենալ բնակչության երկարաժամկետ մարդկային կապիտալի զարգացում և կյանքի որակի բարձրացում:

2025 թվականին սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեն կազմել է 905.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 53.3 մլրդ դրամով: Սոցիալական պաշտպանության ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 8.3 տոկոսը և պետական բյուջեի ընդհանուր ծախսերի շուրջ 26.3 տոկոսը: Այս ցուցանիշները վկայում են, որ սոցիալական պաշտպանությունը շարունակում է պահպանել իր նշանակալի դերը պետական ծախսային քաղաքականության կառուցվածքում:

2025 թվականին սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության շրջանակում իրականացվում է 17 բյուջետային ծրագիր: Ծրագրերի կառուցվածքում առավել մեծ կշիռ ունի կենսաթոշակային ապահովության ծրագիրը, որին հաջորդում են սոցիալական ապահովության և ժողովրդագրական վիճակի բարելավմանն ուղղված ծրագրերը: Մնացած ծրագրերն ունեն համեմատաբար ցածր կշիռներ, որոնցից են՝ սոցիալական աջակցություն անապահովության դեպքում, անապահով և կյանքի դժվարին իրավիճակում գտնվող սոցիալական խմբերին աջակցությունը, զբաղվածության և այլ ծրագրեր: Վերջիններս կարևոր դեր ունեն սոցիալական ռիսկերի նվազեցման և խոցելի խմբերի պաշտպանության ապահովման գործում:

Հաշվի առնելով նախատեսված ծրագրերի և միջոցառումների բազմազանությունը, սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջետային հատկացումները, ինչպես նաև ծրագրերի ուղղվածությունը առավել խոցելի սոցիալական խմբերի աջակցմանը, կարելի է եզրակացնել, որ 2025 թվականին սոցիալական քաղաքականությունը շարունակում է ունենալ կարևոր դեր հասարակության կայունության, ժողովրդագրական զարգացման և սոցիալական արդարության ապահովման գործընթացներում:

Գլուխ 1.1 2020-2025 թթ. սոցիալական պաշտպանության ծրագրերի ցուցանիշների համեմատական վերլուծություն


Սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջետային ծրագրերի պլանային ցուցանիշների ուսումնասիրությունը կարևոր գործիք է պետական սոցիալական քաղաքականության առաջնահերթությունների և ռազմավարական ուղղվածության

բացահայտման համար: Պլանային բյուջեն արտացոլում է ոչ միայն նախատեսվող ֆինանսական ծավալները, այլ նաև կառավարության կողմից իրականացվող սոցիալական ռիսկերի գնահատումը և թիրախային խմբերին ուղղված սոցիալական խնդիրներին արձագանքման գործիքակազմը:

2020-2025 թվականների ժամանակահատվածը սոցիալական պաշտպանության ոլորտի համար բնութագրվում է զգալի փոփոխություններով՝ պայմանավորված համավարակային ճգնաժամով, հետպատերազմյան սոցիալ-տնտեսական խնդիրներով, ինչպես նաև ժողովրդագրական և սոցիալական նոր մարտահրավերներով: Այս համատեքստում սոցիալական պաշտպանության ծրագրերի պլանային ցուցանիշների դինամիկան թույլ է տալիս գնահատել, թե ինչպես են փոփոխվել պետական քաղաքականության շեշտադրումները և ինչպիսի ֆինանսական պատասխաններ են տրվել առաջացած սոցիալական կարիքներին:

Սույն ենթագլխում իրականացվում է սոցիալական պաշտպանության ծրագրերի պլանային ցուցանիշների համեմատական վերլուծություն՝ ընդգրկելով 2020-2024 թվականների հաստատված պլանային տվյալները և 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված ցուցանիշները: Վերլուծությունը հիմնված է 2020-2025 թվականների տարեկան ճշտված պլանային ցուցանիշների վրա: Վերլուծության նպատակն է բացահայտել ֆինանսավորման ընդհանուր միտումները, ծրագրային կառուցվածքի փոփոխությունները և սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության շարունակականությունն ու զարգացումը:

2020-2025 թվականներին սոցիալական պաշտպանության պլանային տարեկան աճի դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս աճի տարբեր տատանումներ՝ արտացոլելով պետական քաղաքականության առաջնահերթությունների փոփոխությունը տարբեր ժամանակահատվածներում (Գծ.1): 2021 թվականին պլանային ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 11.7 տոկոսով կամ 65.9 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է սոցիալական աջակցության ծրագրերի ընդլայնմամբ և հետճգնաժամային (կորոնավիրուս և պատերազմ) սոցիալական կարիքների աճով: 2022 թվականին արձանագրվել է պլանային ծախսերի նվազում՝ 1.1 տոկոս կամ 6.8 մլրդ դրամ, մինչդեռ 2023-2024 թվականներից սկսած գրանցվել են պլանային ծախսերի բարձր աճի տեմպեր՝ համապատասխանաբար 16.7 տոկոս կամ 103.5 մլրդ դրամ և 21.4 տոկոս կամ 154.6 մլրդ դրամ:



Գծապատկեր 1. Սոցիալական պաշտպանության բյուջեն և դրա տարեկան աճը 2020-2025թթ. (պլանային)¹⁰

2025 թվականին պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի ֆինանսավորմանը կուղղվի 905.9 մլրդ դրամ և աճի տեմպը կկազմի 3.1 տոկոս՝ նախորդ տարվա պլանային ցուցանիշի համեմատ ավելանալով 27.3 մլրդ դրամով:

Դիտարկելով պետական բյուջեի ընդամենը պլանային ծախսերի և սոցիալական պաշտպանության ծախսերի դինամիկան, կարելի է արձանագրել, որ դիտարկվող ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի աճին զուգընթաց սոցիալական պաշտպանության ծախսերը ևս ունեն աճման միտում (Գծ.2):

¹⁰ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, փաստացի ցուցանիշներ 2020-2024թթ.:


<https://minfin.am/hy/page/hy-hashvetvutyunner>

ՀՀ ֆինանսների նախարարություն. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենք.

Օրենքի հավելվածեր:

<https://minfin.am/hy/page/petakan-byuje-2025t>

Հեղինակի հաշվարկներ:



Գծապատկեր 2. Սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեն պետական բյուջեի ընդամենը ծախսերում 2020-2025թթ. (պլանային)¹¹

2021 թվականին պետական բյուջեի ծախսերը կազմել են 2,049.3 մլրդ դրամ, իսկ սոցիալական բյուջեի ծախսերը՝ 627.2 մլրդ դրամ: 2022 թվականին պետական բյուջեի ծախսերի պլանային ցուցանիշը կազմել է 2,288 մլրդ դրամ, սակայն սոցիալական պաշտպանության ծախսերի փոքր ինչ նվազում է նկատվել, այնուամենայնիվ, 2023 թվականից սկսած և՛ պետական բյուջեի ծախսերը, և՛ սոցիալական պաշտպանության ծախսերը ունեն տարեկան ճշտված պլանային ցուցանիշների աճման միտում: Հաշվի է առնվել սոցիալական պաշտպանության պետական բյուջեի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում: Պլանային ցուցանիշների ուսումնասիրության հիման վրա, ստացվում է որ սոցիալական պաշտպանության կշիռը պետական բյուջեում 2020 թվականին կազմել է 28.2 տոկոս, և, աստիճանական աճերով, 2025 թվականին նվազել է մինչև 26.3 տոկոս(Գծ.3):

¹¹Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, փաստացի ցուցանիշներ 2020-2024թթ.:


https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

ՀՀ ֆինանսների նախարարություն. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենք.

Օրենքի հավելվածեր:

https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t

Հեղինակի հաշվարկներ:



Գծապատկեր 3. Սոցիալական պաշտպանության բյուջեի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում 2020-2025թթ. (պլանային), տոկոս¹²

2025 թվականին Սոցիալական պաշտպանության բյուջեն ՀՆԱ-ի նկատմամբ կկազմի 8.3 տոկոս: 2025 թվականին Սոցիալական պաշտպանության բյուջեի աճը հիմնականում պայմանավորված է չորս առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող բյուջետային ծրագրերի ֆինանսավորման ծավալների աճով: Պետական բյուջեի ծախսերի գործառական դասակարգման մեջ գերակա ուղղություններից են պաշտպանությունը, տնտեսական հարաբերությունները, առողջապահությունը, կրթությունը և սոցիալական պաշտպանությունը: Սոցիալական պաշտպանությունը շարունակում է մնալ պետական ծախսերի ամենամեծ գործառական ուղղությունը (Գծ. 4):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	22.6
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	19.4

¹²Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, փաստացի ցուցանիշներ 2020-2024թթ.:
https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

ՀՀ ֆինանսների նախարարություն. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենք. Օրենքի հավելվածեր:

https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t
 ՀՀ վիճակագրական կոմիտե. Ազգային հաշիվներ, ՀՆԱ տարեկան ցուցանիշներ 2020-2024թթ.:
<https://armstat.am/am/?nid=14>

ՀՀ ֆինանսների նախարարություն. ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, 2025 թվականի մակրոտնտեսական շրջանակ՝ անվանական ՀՆԱ, էջ 60:
https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t

Հեղինակի հաշվարկներ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	7.2
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6.7
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	0.5
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	0.5
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	4.9
ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	1.4
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	8.7
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	26.3


Աղյուսակ 1. Առանձին ոլորտների կշիռները պետական բյուջեի ծախսերում, 2025թ. (պլանային), գործառական դասակարգում, տոկոս¹³

2025 թվականին բյուջետային մյուս բոլոր ոլորտների կշիռների հետ համեմատած՝ ամենաբարձր մասնաբաժինն ունի սոցիալական պաշտպանությունը: Մասնավորապես՝ պաշտպանության ոլորտի ծախսերի հարաբերությունը պետական բյուջեի ծախսերի նկատմամբ կազմում է 19.4 տոկոս՝ զիջելով սոցիալական պաշտպանության կշիռն 6.9 տոկոսային կետով, կրթության ոլորտը՝ 17.6 տոկոսային կետով, իսկ տնտեսական հարաբերություններ և առողջապահություն ոլորտները զիջում են համապատասխանաբար 19.6 և 21.4 տոկոսային կետով:

Քանի որ վերլուծության հիմքում ընկած է սոցիալական պաշտպանության այն ծրագրերի վերլուծությունը, որոնք առնչվում են ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց, անհրաժեշտ է կատարել նաև այդ ծրագրերի պլանային ցուցանիշների ուսումնասիրություն:

Զբաղվածության ծրագրի պլանային դինամիկան 2020-2025 թվականներին բնութագրվում է փոփոխական և ոչ կայուն միտումներով: 2021 թվականին ծրագիրը նախատեսել է 93 մլն դրամով կամ 4.6 տոկոսով աճ, սակայն 2022-2023 թվականներին պլանային ֆինանսավորման կրճատում՝ համապատասխանաբար 750.4 մլն դրամ կամ 35.2 տոկոս և 334.2 մլն դրամ կամ 24.1 տոկոս (Գծ. 4):

¹³Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր: Հավելված_N2 Հավելված.Գործառական.դասակարգման: https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t Հեղինակի հաշվարկներ:




Գծապատկեր 4. Զբաղվածության ծրագրի բյուջեն և դրա տարեկան աճը 2020-2025թթ. (պլանային)¹⁴

2024 թվականին նախատեսվել է կտրուկ վերականգնում՝ 766.5 մլն դրամով կամ 73 տոկոսով՝ ինչը վկայում է զբաղվածության խթանման քաղաքականության վերաակտիվացման մասին: 2025 թվականին, սակայն, նախատեսվում է պլանային նվազում՝ 83.4 մլն դրամով կամ 4.6 տոկոսով:

Ծրագրի պլանային ֆինանսավորումը չի ցուցաբերում կայուն աճի միտում և բնութագրվում է ցիկլային փոփոխություններով, ինչը կարևոր է հաշվի առնել ծրագրի արդյունավետության և երկարաժամկետ ազդեցության գնահատման ժամանակ:

Բնակարանային ապահովման ծրագրի պլանային ցուցանիշներով 2021-2022 թվականներին նախատեսվել են պլանային նվազումներ՝ 2.2 մլրդ դրամով կամ 54.4 տոկոսով և 808.3 մլն դրամով կամ 43.3 տոկոսով: Այս նվազումը կապված է ծրագրի մասշտաբների զգալի սահմանափակման կամ քաղաքական առաջնահերթությունների փոփոխության մասին (Գծ. 5):

¹⁴Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, տարեկան ճշտված պլանային ցուցանիշներ 2020-2024թթ.:
https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner
 ՀՀ ֆինանսների նախարարություն. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենք. Օրենքի հավելվածեր:
https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t
 Հեղինակի հաշվարկներ:



Գծապատկեր 5. Բնակարանային ապահովման ծրագրի բյուջեն և դրա տարեկան աճը 2020-2025թթ. (պլանային)¹⁵


Հաջորդ տարիներին՝ 2023-2024 թվականներին, նախատեսվել է կտրուկ աճ՝ 189.2 տոկոս և 190.1 տոկոս և ծախսերի ավելացում՝ համապատասխանաբար 2 մլրդ դրամով և 5.8 մլրդ դրամով: 2025 թվականին նախատեսվում է ծախսերի ավելացում տարեկան ճշտված պլանով՝ 3.1 մլրդ դրամով կամ 35.4 տոկոսով:

Մյուս ծրագրի՝ ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցության պլանային ֆինանսավորման դինամիկան բնութագրվում է անհամաչափ տատանումներով: 2021 թվականին նախորդ տարվա նկատմամբ ծախսերը կրճատվել են մոտ 100 տոկոսով՝ կազմելով ընդամենը 1 մլն դրամ: Սա փաստում է ծրագրի ժամանակավոր դադարեցման մասին, ինչի արդյունքում 2022 թվականին ծրագիրը չի գործել (Գծ. 6):

¹⁵Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, տարեկան ճշտված պլանային ցուցանիշներ 2020-2024թթ.:
https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

ՀՀ ֆինանսների նախարարություն. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենք. Օրենքի հավելվածեր:
https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t

Հեղինակի հաշվարկներ:



Գծապատկեր 6. Ճգն. հակ. և արտ. իրավիճակների նվ. և վեր. նպ.՝ առ. սոց. խմբ. տրվող սոց. աջակցության ծրագրի բյուջեն և դրա տարեկան աճը 2020-2025թթ. (պլանային)¹⁶

2023 թվականին ծրագիրը կրկին գործարկվել է՝ ուղղված 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվածներին աջակցության միջոցառումների իրականացմանը¹⁷: 2024 թվականին ևս նախատեսվել է ծախսերի աճ՝ նախորդ տարվա համեմատ 35.4 մլրդ դրամով կամ 117.1 տոկոսով, ինչը վկայում է ճգնաժամային իրավիճակներին արձագանքման անհրաժեշտության ուժեղացման մասին: 2025 թվականին նախատեսվում է ծրագրին հատկացնել 35 մլրդ դրամ, ինչը 30.7 մլրդ դրամով կամ 46.7 տոկոսով պակաս է նախորդ տարվա պլանային ցուցանիշից:

Ընդհանուր առմամբ, ծրագրի պլանային ֆինանսավորումը կրել է իրավիճակային և ռեակտիվ բնույթ՝ կախված արտակարգ իրավիճակների առկայությունից, և չի ունեցել կայուն, կանխատեսելի դինամիկա: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ

¹⁶ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, տարեկան ճշտված պլանային ցուցանիշներ 2020-2024թթ.:
https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

ՀՀ ֆինանսների նախարարություն. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենք. Օրենքի հավելվածեր:
https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t

Հեղինակի հաշվարկներ:
¹⁷ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի կատարման վերլուծություն 2023թ.:
https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

ծրագիրն առավելապես թիրախային գործում է հատկապես արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում:

Գլուխ 1.2 2020-2024թթ. Բյուջետային ծրագրերի կատարողականների գնահատում

Սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեի կատարողականը գնահատելու համար կարևոր է ոչ միայն պլանային ցուցանիշների դիտարկումը, այլ նաև դրանց համեմատությունը փաստացի ծախսերի հետ: Սա թույլ է տալիս վերլուծել բյուջեի իրականացման արդյունավետությունը, բացահայտել առավել մեծ կամ փոքր բացթողումները և գնահատել ոլորտի առաջնահերթությունների իրագործման մակարդակը: Սույն զեկույցը հիմնված է պլանային և փաստացի ծախսերի համեմատության վրա, ինչը թույլ է տալիս գնահատել ֆինանսավորման արդյունավետությունը և ոլորտի առաջնահերթությունների իրականացման աստիճանը:

Համեմատելով տարեկան ճշտված պլանային և փաստացի ցուցանիշները, նկատելի է, որ 2020-2024 թվականների ընթացքում սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեի կատարողականը պահպանվել է բարձր մակարդակի վրա: Ուսումնասիրվող ժամանակահատվածում կատարման ցուցանիշները գերազանցել են 97 տոկոսը, արդյունքում կարելի է պնդել, որ ապահովվել է կատարողականի բարձր մակարդակ (Աղ. 2):

	Սոցիալական պաշտպանության բյուջեի ծախսերը (հազ. դրամ) պլանային	Սոցիալական պաշտպանության բյուջեի ծախսերը (հազ. դրամ) փաստացի	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Տարբերություն
2020	561,270,682.5	548,283,822.30	97.7%	12,986,860.2
2021	627,154,211.4	619,774,103.40	98.8%	7,380,108.0
2022	620,369,218.4	613,585,519.10	98.9%	6,783,699.3
2023	723,885,940.9	705,605,358.90	97.5%	18,280,582.0
2024	878,536,283.9	852,518,316.00	97%	26,017,967.9

Աղյուսակ 2. Սոցիալական պաշտպանության բյուջեի կատարման ցուցանիշները (պլան-փաստացի), 2020-2024թթ.¹⁸

¹⁸ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, փաստացի ցուցանիշներ 2020-2024թթ.:

Միևնույն ժամանակ, փաստացի և պլանային ցուցանիշների միջև առավել մեծ տարբերությունն արձանագրվել է 2024 թվականին՝ շուրջ 26 մլրդ դրամ, մինչդեռ 2022 թվականին այդ տարբերությունը համեմատաբար փոքր է եղել՝ 6.8 մլրդ դրամ: Բացի այդ, կատարման տոկոսները, տարեկան ճշտված պլանի նկատմամբ, 2020-2024 թվականներին բարձր են եղել:

Պլանային և փաստացի աճի տեմպերի համեմատությունը ցույց է տալիս, որ 2021-2024 թվականներին սոցիալական պաշտպանության ոլորտում բյուջետային ծախսերի իրականացման և պլանավորման միջև էական շեղումներ չեն եղել (Աղ. 3): 2021 թվականին փաստացի ցուցանիշը 1.3 տոկոսային կետով բարձր է եղել պլանային ցուցանիշից, իսկ 2022 թվականին պլանային և փաստացի ցուցանիշների շեղումը կազմել է 0.1 տոկոսային կետ:

Տարեկան աճ (%)	2021	2022	2023	2024
Պլանային	11.7	-1.1	16.7	21.4
Փաստացի	13	-1	15	20.8
Տարբերություն (պլանային և փաստացի)	1.3	0.1	1.7	0.6

Աղյուսակ 3. Սոցիալական պաշտպանության բյուջեի պլանային և փաստացի տարեկան աճի տեմպերը, տոկոս¹⁹

2023-2024 թվականներին փաստացի աճի տեմպերը հիմնականում պակաս են եղել պլանային կանխատեսումների համեմատ՝ համապատասխանաբար 1.7 տոկոսային կետով և 0.6 տոկոսային կետով: Ընդհանուր առմամբ, տվյալները վկայում են սոցիալական պաշտպանության ոլորտում բյուջետային պլանավորման և դրա կատարման հարաբերական կայունության մասին: 2020-2024 թվականների սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորման աճը եղել է համեմատաբար կայուն: Ամենաբարձր աճը գրանցվել է 2024 թվականին՝ կազմելով 20.8 տոկոս կամ 146.9 մլրդ

https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

ՀՀ ֆինանսների նախարարություն. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենք.

Օրենքի հավելվածեր:

https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t


Հեղինակի հաշվարկներ:

¹⁹ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, փաստացի ցուցանիշներ 2020-2024թթ.:

https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

դրամ²⁰ նախորդ տարիների համեմատ, ինչը պայմանավորված է մի քանի ծրագրերի ծախսերի աճով: Ամենացածր աճի մակարդակը գրանցվել է 2022 թվականին՝ 1 տոկոս կամ 6.2 մլրդ դրամ՝ պայմանավորված Սոցիալական ապահովության ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի անկմամբ²¹, 2021 թվականի նկատմամբ նվազելով 14 տոկոսային կետով:

Համեմատելով պետական բյուջեի և սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի պլանային և փաստացի ցուցանիշները՝ նկատելի է, որ 2020–2024 թվականներին փաստացի կատարողականը պլանայինի համեմատ հիմնականում եղել է ցածր: 2020 թվականին պետական բյուջեի փաստացի ծախսերը 94 մլրդ դրամով պակաս են եղել պլանային ցուցանիշից: Նույն միտումը պահպանվել է նաև հաջորդ տարիներին. 2021 և 2022 թվականներին թերակատարումը կազմել է համապատասխանաբար մոտ 45 մլրդ դրամ, 2023 թվականին՝ ավելի քան 77 մլրդ դրամ, իսկ 2024 թվականին այն առավել արտահայտված է եղել՝ կազմելով շուրջ 193 մլրդ դրամ (Գծ. 7):



²⁰ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի չեղինակի հաշվարկներ:

²¹ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի կատարման վերլուծություն. 2022 թվական: չեղինակի հաշվարկներ:

Գծապատկեր 7. Պետական բյուջեի և սոցիալական պաշտպանության բյուջեի ծախսերի կատարման ցուցանիշները (պլան-փաստացի), 2020-2024թթ²²

Սակայն պետական բյուջեի ընդհանուր ծախսերի աճի դինամիկան, վկայում է ծախսային ծավալների էական ընդլայնման մասին. 2020 թվականի համեմատ 2024 թվականին պլանավորված ծախսերը աճել են շուրջ 58 տոկոսով, իսկ փաստացի ծախսերը՝ շուրջ 56 տոկոսով:

Սոցիալական պաշտպանության ոլորտում 2020 թվականին պլանավորված 561.3 մլրդ դրամի դիմաց փաստացի ծախսվել է շուրջ 548.3 մլրդ դրամ, ինչի արդյունքում շեղումը կազմել՝ մոտ 13 մլրդ դրամ: 2021-2022 թվականներին ևս փաստացի ծախսերը նախատեսվածից եղել են ցածր՝ համապատասխանաբար 7 մլրդ դրամով և 6 մլրդ դրամով: 2023 և 2024 թվականներին սոցիալական պաշտպանության փաստացի ծախսերը պլանային ցուցանիշներից պակաս են եղել համապատասխանաբար շուրջ 18 մլրդ դրամով և 26 մլրդ դրամով: Սակայն պետք է նկատել, որ 2020 թվականի համեմատ պլանային ծախսերն ավելացել են շուրջ 56 տոկոսով, իսկ փաստացի ծախսերը՝ մոտ 55 տոկոսով: Միաժամանակ, պլանային և փաստացի աճի տեմպերի միջև շեղումները համեմատաբար սահմանափակ են, ինչը խոսում է սոցիալական պաշտպանության ոլորտում ֆինանսական կարգապահության և ծրագրերի իրականացման հարաբերական կայունության մասին:

Բացի այդ, պետական բյուջեի ընդամենը ծախսերում սոցիալական պաշտպանության ծախսերի փաստացի ցուցանիշները (կշիռները) փոքր ինչ բարձր են եղել՝ պլանայինի հետ համեմատած: Ամենաբարձր շեղումները գրանցվել են 2020 թվականին և 2024 թվականին՝ 0.7 տոկոս և 0.9 տոկոս: 2025 թվականին՝ 2024 թվականի համեմատ սոցիալական պաշտպանության ծախսերը կավելանան 53.3 մլրդ դրամով կամ 6.3 տոկոսով (Աղ. 4):

Կշիռը պետական բյուջեում (%)	2020	2021	2022	2023	2024

²² Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, փաստացի ցուցանիշներ 2020-2024թթ.:

https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

ՀՀ ֆինանսների նախարարություն. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենք.

Օրենքի հավելվածեր:

https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t

Հեղինակի հաշվարկներ:

Պլանային	28.2	30.6	27.1	27.6	27.9
Փաստացի	28.9	30.9	27.4	27.7	28.8
Տարբերություն	0.7	0.3	0.3	0.1	0.9

Աղյուսակ 4. Սոցիալական պաշտպանության բյուջեի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում, պլանային և փաստացի համեմատություն, տոկոս²³

Քանի որ զեկույցի հիմնական նպատակն է վերլուծել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ուղղված սոցիալական պաշտպանության ծրագրերը, դիտարկվել են նաև այդ ծրագրերի պլանային և փաստացի ցուցանիշները՝ ֆինանսավորման իրականացման արդյունավետությունը գնահատելու համար (Հավելված 1, 2):

Դիտարկելով զբաղվածության ծրագրի տարեկան պլանային և փաստացի ցուցանիշները՝ պարզ է դառնում, որ ֆինանսավորման իրացման մակարդակը եղել է անհամաչափ: 2020 թվականին կատարողականը կազմել է 95.1 տոկոս, ինչը համարվում է բարձր ցուցանիշ: Սակայն 2021-2022 թվականներին կատարման մակարդակը նվազել է՝ կազմելով համապատասխանաբար 79.7 տոկոս (բավարար մակարդակ) և 63.2 տոկոս (միջին մակարդակ): 2023-2024 թվականներին տարեկան ճշտված պլանի նկատմամբ կատարման մակարդակները կազմել են 85 տոկոս և 79.3 տոկոս, որոնք գնահատվում են որպես բավարար մակարդակներ: Ընդհանուր առմամբ, կարելի է արձանագրել, որ զբաղվածության ծրագրի կատարողականը հիմնականում գտնվել է միջին և բավարար մակարդակներում, ինչը վկայում է ծրագրի իրականացման արդյունավետության սահմանափակ լինելու մասին: Ծրագրի տարեկան աճի տեմպերով ևս նկատելի են բարձր շեղումներ. 2021 թվականի պլանային աճի տեմպը նախորդ տարվա համեմատ կազմել է 4.6 տոկոս, իսկ փաստացի ցուցանիշը -12.3 տոկոս: 2022 թվականին պլանավորված կրճատումը փաստացի գերազանցվել է՝ կազմելով -48.6 տոկոս, իսկ 2023 թվականին պլանային նախատեսվել է -24.1 տոկոս նվազում, սակայն զբաղվածության ծրագրի ծախսերն աճել են 17.4 մլն դրամով կամ 2 տոկոսով: 2024 թվականին ծրագրի ֆինանսավորումը ավելացել է 61.4 տոկոսով կամ 548 մլն դրամով՝ պլանային ցուցանիշի համեմատ: Ուսումնասիրվել է նաև Հայաստանի տեղեկատվական համակարգում սույն

²³Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, փաստացի ցուցանիշներ 2020-2024թթ.:
https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

ծրագրում փոփոխությունների կատարման ընթացքը, ըստ որի զբաղվածության ծրագիրը փոփոխման է ենթարկվել 2 անգամ²⁴:

Այսպիսով, ծրագրի աճի դինամիկայի բարձր տատանողականությունը վկայում է զբաղվածության ծրագրի պլանավորման գործընթացում կանխատեսման ռիսկերի առկայության և արտաքին գործոնների նկատմամբ բարձր զգայունության մասին:

Բնակարանային ապահովման ծրագիրն ընդհանուր առմամբ ունի համեմատաբար բարձր կատարողական: 2020 և 2022-2024 թվականներին կատարողականը գերազանցել է 85 տոկոսը (բավարար մակարդակ): 2021 թվականին ծրագրի իրականացման արդյունավետությունն էականորեն նվազել է. կատարման մակարդակը կազմել է ընդամենը 44 տոկոս: Փաստացի ծախսերը պլանայինից պակաս են եղել ավելի քան 1 մլրդ դրամով, իսկ տարեկան փաստացի նվազումը (-79.2 տոկոս) զգալիորեն գերազանցել է պլանավորված կրճատումը (-54.4 տոկոս): Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը կրճատվել են 3.1 մլրդ դրամով կամ 79.2 տոկոսով՝ պայմանավորված երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման ծախսերի նվազմամբ²⁵: 2022 թվականից սկսած ծրագրի կատարողականները բարձր են եղել 80 տոկոսից և տարեկան աճի տեմպերը ևս տարեցտարի ավելացել են: 2022 թվականին, չնայած պլանային շարունակական նվազմանը (-43.3 տոկոս), ծրագրի փաստացի կատարողականը զգալիորեն բարելավվել է՝ կազմելով 90 տոկոս: Միևնույն ժամանակ արձանագրվել է փաստացի աճ՝ 15.8 տոկոս կամ 130 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ: Չնայած փաստացի ցուցանիշն ավելի պակաս է եղել պլանայինից՝ մոտ 106 մլն դրամով: 2023-2024 թվականներին շարունակական աճը պահպանվել է՝ ավելանալով 2-3 անգամ: Չնայած ծախսերի ծավալների զգալի աճին՝ կատարման մակարդակները պահպանվել են համեմատաբար բարձր՝ 84.2 և 90.3 տոկոս: Միևնույն ժամանակ, պլանային և փաստացի ցուցանիշների միջև բացասական տարբերությունները (484-860 մլն դրամ) ցույց են տալիս, որ նույնիսկ բարձր իրացման պայմաններում պահպանվում են որոշակի թերակատարումներ: 2025 թվականին ծրագրի ծախսերը նախորդ տարվա համեմատ կավելանան մոտ 4 մլն դրամով կամ 49.9 տոկոսով, իսկ պլանայինի համեմատ

²⁴Աղբյուրը՝ Հայաստանի տեղեկատվական համակարգ:

<https://www.arlis.am/hy/acts/207962/latest>

²⁵Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան վերլուծություն. 2021թ.:

https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

3.3 մլրդ դրամով կամ 35.4 տոկոսով: Ըստ Հայաստանի տեղեկատվական իրավական համակարգի՝ բնակարանային ապահովման ծրագրում կատարվել են փոփոխություններ²⁶:

Բնակարանային ապահովման ծրագրի պլանային և փաստացի աճի տեմպերի համեմատությունը վկայում է ֆինանսավորման բարձր անհամաչափության և պլանավորման ու իրականացման միջև զգալի շեղումների մասին:

«Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման նպատակով սոցիալական աջակցություն» ծրագրի դեպքում նկատվում է համեմատաբար բարձր և կայուն կատարողական: Ծրագիրը 2022 թվականին չի գործել, 2020, 2023 և 2024 թվականներին կատարողականը գերազանցել է 92 տոկոսը (բարձր մակարդակ), իսկ 2021 թվականին ապահովվել է 100 տոկոս կատարում (բարձր մակարդակ): 2020 թվականին ծրագրի կատարման մակարդակը կազմել է 94.2 տոկոս, իսկ պլանային և փաստացի ծախսերի միջև տարբերությունը կազմել է շուրջ 1.6 մլրդ դրամ: 2021 թվականին ծրագիրը կտրուկ կրճատվել է՝ հասնելով նվազագույն ծավալի (1.02 մլն դրամ), միաժամանակ ապահովելով 100 տոկոս կատարողական: 2022 թվականին ծրագիրը չի իրականացվել, ինչը ևս ընդգծում է դրա արձագանքային և իրավիճակային բնույթը: 2023 թվականին ծրագիրը կրկին գործարկվել և հատկացվել է 28.7 մլրդ դրամ՝ ապահովելով 95 տոկոս կատարողական՝ 2024 թվականին ծախսերի ծավալների զգալի աճի պայմաններում (պլանային աճ՝ 110.9 տոկոս) և կատարման մակարդակը կազմել է 92.3 տոկոս: Պլանային և փաստացի ցուցանիշների միջև շեղումը 2024 թվականին հասել է շուրջ 5 մլրդ դրամի, ինչը կարող է պայմանավորված լինել ծրագրի լայն ընդգրկմամբ և իրականացման փուլային բնույթով: 2025 թվականին նախատեսված է ծրագրին տրամադրել 35 մլն դրամ, ինչի արդյունքում նկատվել է նախորդ տարվա համեմատ պլանային ցուցանիշի նկատմամբ 46.7 տոկոս նվազում իսկ փաստացի ցուցանիշի նկատմամբ՝ 42.3 տոկոս նվազում: Ինչպես նախորդ ծրագրերի դեպքում, սույն ծրագրում ևս պարբերաբար կատարվել են մի շարք փոփոխություններ՝ ուղղված տեղահանվածների սոցիալական աջակցությանը²⁷:

Ընդհանուր առմամբ, ծրագիրը բնութագրվում է բարձր կատարողականով այն տարիներին, երբ գործարկվել է, սակայն ունի անկայուն ֆինանսավորման դինամիկա՝

²⁶Աղբյուրը՝ Հայաստանի տեղեկատվական համակարգ:

<https://www.arlis.am/hy/acts/215714/latest>

²⁷Աղբյուրը՝ Հայաստանի տեղեկատվական համակարգ:

<https://www.arlis.am/hy/acts/200819/latest>

<https://www.arlis.am/hy/acts/218745/latest>

պայմանավորված արտակարգ իրավիճակների առաջացման հաճախականությամբ և կառավարության ընթացիկ սոցիալական առաջնահերթությունների փոփոխությամբ:

2020-2024 թվականներին վերոնշյալ ծրագրերի փաստացի ծախսերը եղել են պլանավորվածից ցածր, ինչը վկայում է ծրագրերի իրականացման ընթացքում ֆինանսական ռեսուրսների ոչ լիարժեք իրացման մասին: Կարելի է փաստել, որ ծրագիրն առավել թիրախային գործում է հատկապես արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում: Դրանով են պայմանավորված նաև կատարման մակարդակների բարձր ցուցանիշները:

ԳԼՈՒԽ 2. 2025 ԹՎԱԿԱՆԻ 9 ԱՄԻՍՆԵՐԻ ՊԼԱՆԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ և ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այս գլխում կատարվել է սոցիալական բյուջեի 2025 թվականի ծրագրերի 9 ամիսների կատարողականի գնահատումը, որի նպատակն է բացահայտել ծրագրերի իրականացման ընթացքը, ֆինանսական կատարողականի մակարդակը, ինչպես նաև արձանագրված հիմնական խնդիրները:

Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականությամբ 2025 թվականին իրականացվում է 17 ծրագիր և սոցիալական պաշտպանության բյուջեի կառուցվածքը հիմնականում կենտրոնացված է մի քանի խոշոր ծրագրերի վրա: «Կենսաթոշակային ապահովություն»-ը մնում է գերիշխող ուղղությունը և կկազմի սոցիալական պաշտպանության բյուջեի 61.85 տոկոսը, ինչը նախորդ տարվա համեմատ կավելանա 0.9 տոկոսային կետով (Հավելված 1): Մյուս խոշոր ծրագրերից է «Սոցիալական ապահովություն»-ը՝ 2025 թվականին կկազմի 13.54 տոկոս և նախորդ տարվա համեմատ կավելանա 0.8 տոկոսային կետով: Հաջորդում են «Ժողովրդագրական վիճակի բարելավում» և «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն» ծրագրերը, որոնք 2025 թվականին կկազմեն համապատասխանաբար 8.84 տոկոս՝ նախորդ տարվա համեմատ կավելանա 1.02 տոկոսային կետով և 3.86՝ նախորդ տարվա համեմատ կնվազի 3.25 տոկոսային կետով: Հարկ է նշել, որ մյուս ծրագրերը ունեն համեմատաբար ցածր կշիռ սոցիալական պաշտպանության ընդամենը բյուջեում: Ընդհանուր առմամբ, վերոնշյալ ծրագրերը 2025 թվականին կկազմեն սոցիալական պաշտպանության բյուջեի 88 տոկոսը:

2025 թվականի ինն ամիսներին ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 2,205.4 մլրդ դրամ՝ տարեկան ճշտված պլանի 2,572.0 մլրդ դրամի փոխարեն: Արդյունքում շեղումը կազմել է 366.6 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կատարողականը կազմել է 85.7 տոկոս: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծախսերն ավելացել են 272.1 մլրդ դրամով կամ 14.1 տոկոսով՝ պայմանավորված²⁸ ՀՀ պաշտպանության և ՀՀ ԿԳՄՍ նախարարությունների ծախսերի աճով:

²⁸Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի հաշվետվություններ. 2.2 Ծրագրերի վերլուծությունն ըստ պատասխանատու պետական մարմինների. 2025թ. 9 ամիս: https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

ՀՀ պետական բյուջեից 2025 թվականի ինն ամիսներին սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը կազմել են 642.3 մլրդ դրամ՝ տարեկան ճշտված պլանի համեմատ տարբերությունը կազմել է մոտ 70 մլրդ դրամ, իսկ կատարողականը կազմել է 90.2 տոկոս: Նախորդ տարվա ինն ամիսների համեմատ ծախսերն աճել են 21.9 մլրդ դրամով կամ 3.5 տոկոսով, ինչը պայմանավորված է Կենսաթոշակային ապահովության, Սոցիալական ապահովության, Ժողովրդագրական վիճակի բարելավման և Բնակարանային ապահովման ծրագրերի աճով²⁹ (Աղ. 5)

	2024թ. 9 ամիսների փաստացի	2025թ. 9 ամիսների ճշտված պլան	2025թ. 9 ամիսների փաստացի	2025թ. կատարողականը (%)	2025թ. 2024թ.-ի նկատմամբ (%)	2025թ. և 2024թ. տարբերությունը
Ընդամենը ծախսեր	1,933.4	2,572.0	2,205.4	85.7	14.1	272.1
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	620.5	712.4	642.3	90.2	3.5	21.9

Աղյուսակ 5. Պետական բյուջեի և սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի 9 ամիսների կատարողականը, 2024-2025 թթ³⁰.

Սոցիալական պաշտպանության մասնաբաժինը պետական բյուջեի ընդամենը ծախսերում 2025 թվականի ինն ամիսներին կազմել է 29.1 տոկոս, ինչն արդեն իսկ բարձր ցուցանիշ է՝ համեմատած տարեկան պլանային ցուցանիշի (26.3 տոկոս) հետ: Նախորդ տարվա ինն ամիսների նկատմամբ սոցիալական պաշտպանության կշիռը պետական բյուջեում նվազել է 3 տոկոսային կետով: Այսպիսով, սոցիալական պաշտպանությունը շարունակում է մնալ գերակա ուղղություն:

Հեղինակի հաշվարկներ:

²⁹ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի հաշվետվություններ. 2.2 Ծրագրերի վերլուծությունն ըստ պատասխանատու պետական մարմինների. 2025թ. 9 ամիս: https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

Հեղինակի հաշվարկներ:

³⁰ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, փաստացի ցուցանիշներ 2024-2025թթ. 9 ամիս: https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

Հեղինակի հաշվարկներ:

2025 թվականի ինն ամիսների պետական բյուջեի ծախսերի գործառական դասակարգման մեջ սոցիալական պաշտպանության կշիռը շարունակում է մնալ ամենամեծ ուղղություններից մեկը՝ կազմելով 27.7 տոկոս, ինչը գերազանցում է նաև տարեկան պլանային ցուցանիշը՝ 1.1 տոկոսային կետով (Աղ. 6):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	19.8
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	19.7
ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	7.1
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5.1
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	0.4
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	0.2
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	5
ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	1.2
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	8.8
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	27.7

Աղյուսակ 6. Առանձին ոլորտների կշիռները պետական բյուջեի ծախսերում, 2025թ., գործառական դասակարգում, ինն ամիսներ, տոկոս³¹

Հաջորդում են հանրային ծառայությունների՝ 19.8 տոկոս (զիջելով 7.9 տոկոսային կետով), պաշտպանության՝ 19.7 տոկոս (զիջելով 8 տոկոսային կետով), կրթության՝ 8.8 տոկոս (զիջելով 18.9 տոկոսային կետով), տնտեսական հարաբերությունների՝ 5.1 տոկոս (զիջելով 22.6 տոկոսային կետով) և այլն:

2025 թվականի ինն ամիսների ընթացքում ԱՍՀՆ պատասխանատվությամբ իրականացվել է 17 բյուջետային ծրագիր: Ծրագրերից բարձր կատարողական ապահովել են 9 ծրագիր, բավարար՝ 5 և միջին՝ 3 ծրագիր (Հավելված 3): Ինչպես տարեկան կտրվածքով, այնպես էլ 9 ամիսների դեպքում ևս սոցիալական պաշտպանության կառուցվածքը հիմնված է մի քանի խոշոր ծրագրերի վրա: Կենսաթոշակային ապահովությունը շարունակում է մնալ գերակա ուղղությունը՝ ապահովելով 61.5 տոկոս, որին հաջորդում են Սոցիալական ապահովության՝ 14 տոկոս, Ժողովրդագրական վիճակի բարելավում՝ 8.5 տոկոս և Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով ծրագրերը՝ 4.55 տոկոս: Այս տեսանկյունից կարևոր է ուշադրություն դարձնել նաև մյուս ծրագրերին:

³¹ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվություն: Հարկաբյուջետային քաղաքականություն. Ծախսեր ըստ գործառական դասակարգման. 2025թ. 9 ամիս: https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner
Հեղինակի հաշվարկներ:

ԳԼՈՒԽ 3. ԼՂ-ԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Սույն գլխում ներկայացվում է վերը նշված ծրագրերի համապարփակ վերլուծությունը՝ յուրաքանչյուր ծրագրի առանձին դիտարկմամբ, ինչպես նաև ներկայացվում են ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց շրջանում իրականացված որակական հարցումների արդյունքները: Հարցումների ընթացքում մասնակիցները կիսվել են պետական աջակցության ծրագրերից օգտվելու կամ դրանցից չօգտվելու իրենց փորձառությամբ՝ մատնանշելով առկա հնարավորություններն ու խոչընդոտները:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների սոցիալական ապահովման պետական քաղաքականության շրջանակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացնում է բազմաբնույթ ծրագրեր և միջոցառումներ, որոնք նպատակ ունեն ապահովելու տեղահանված անձանց սոցիալական պաշտպանությունը, կենսապայմանների կայունացումը և սոցիալ-տնտեսական ինտեգրումը:

Վերջիններիս ընդգրկումը որպես առանձին թիրախային խումբ վկայում է, որ պետական քաղաքականության առաջնահերթություններից է երկարաժամկետ ռազմավարության ձևավորումը՝ նպաստելով այդ անձանց ներգրավմանը տնտեսական և հասարակական կյանքում: Այս մոտեցումը կարևոր է, քանի որ այն ընդլայնում է կարճաժամկետ օգնության տրամադրման շրջանակը և միտված է նվազեցնել սոցիալական մեկուսացման ու խոցելիության ռիսկերը: Դրանք ներառում են՝ Զբաղվածության³², Բնակավարանային ապահովման³³ և Ճգնաժամերին հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն ծրագրերը³⁴:

- **Զբաղվածության ծրագիր.** կարճաժամկետ ուսուցման դասընթացների կազմակերպում և աշխատանքային փորձ ձեռք բերելու հնարավորությունների ապահովում (2023 թվականին տեղահանված անձանց):

³² ՀՀ ԱՍՀՆ. Զբաղվածության ապահովման պետական աջակցության ծրագիր՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար: <https://www.mlsa.am/Programs-And-Services/147>


³³ ՀՀ ԱՍՀՆ. Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների բնակապահովման ծրագիր: <https://www.mlsa.am/Programs-And-Services/6/27/head>

³⁴ ՀՀ ԱՍՀՆ. Ղարաբաղից բռնի տեղահանված կարիքավոր ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության ծրագիր: <https://www.mlsa.am/Programs-And-Services/6/28/head>

- **Բնակարանային ապահովման աջակցություն.** բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցություն ԼՂ-ի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար:
- **Ճգնաժամերին հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման միջոցառումներ,** այդ թվում՝
 - միանվագ դրամական աջակցություն,
 - սոցիալական աջակցություն կեցության և այլ անհրաժեշտ ծախսերը հոգալու համար,
 - սոցիալական աջակցություն առաջնային սպառողական ծախսերի ապահովման համար:

2025 թվականին շարունակվում են վերոնշյալ ծրագրերին ու միջոցառումներին ուղղված ֆինանսավորումները, որոնք նպատակ ունեն ոչ միայն ապահովել տեղահանվածների հրատապ կարիքները, այլ նաև ստեղծել երկարաժամկետ սոցիալական և տնտեսական վերաինտեգրման և/կամ ինտեգրման հիմքեր:


Ծրագրերի ու միջոցառումների վերաբերյալ շահառուների կարծիքներն ու մոտեցումներն ուսումնասիրելու նպատակով անցկացված որակական հարցմանը մասնակցել է ԼՂ-ից բռնի տեղահանված 117 անձ, ընդ որում 13.7 տոկոսը արական, իսկ 86.3 տոկոսը եղել են իգական սեռի (Գծ. 8):



Գծապատկեր 8. Որակական հարցման մասնակիցների տարիքային բաշխվածությունը, տոկոս

Ինչ վերաբերվում է հարցման մասնակիցների տարիքային բաշխմանը, ապա հարցվածների առավել մեծ խումբը 36-45 տարեկան է՝ կազմելով 43.6 տոկոս, որին հաջորդում 26-35 տարիքային խումբը՝ 26.5 տոկոս: Ամենաքիչ մասնակցությունն ապահովել են 56 և ավելի բարձր տարիք ունեցող անձինք՝ 1.7 տոկոս:

Ըստ հարցման՝ մասնակիցների 72.6 տոկոսն այժմ բնակվում է քաղաքային բնակավայրում, իսկ 27.4 տոկոսը՝ գյուղական: Մասնակիցների 23.1 տոկոսը ներկայումս բնակվում է Երևան քաղաքում, շուրջ 19 տոկոսը՝ Լոռու և Կոտայքի մարզերում (Գծ.9): Մյուս մարզերում հարցման մասնակիցների բաշխվածությունը եղել է համեմատաբար ավելի սահմանափակ:



Գծապատկեր 9. Մարզային բաշխվածությունն ըստ հարցման մասնակիցների, տոկոս

Հարցման մասնակիցների զգալի մասը նշել է, որ չի ներգրավվել պետական աջակցության ծրագրերի ձևավորման կամ քննարկման գործընթացներում՝ սեփական կարիքներն ու ակնկալիքները ներկայացնելու նպատակով: Միևնույն ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ որոշ մասնակիցներ մասնակցել են քննարկումներին, որոնք հիմնականում նախաձեռնվել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և միջազգային կառույցների կողմից:

Մասնակիցների փորձառությունները վկայում են, որ հանրային մասնակցության սահմանափակ մակարդակը կարող է ազդել ծրագրերի ընկալման, հասանելիության և արդյունավետության վրա, հատկապես սոցիալական աջակցության երկարաժամկետ բաղադրիչների տեսանկյունից:

«Մասնակցել ենք քննարկումների, նույնիսկ բողոքի ակցիա ենք իրականացրել որպեսզի շարունակվի բնակավարձի աջակցությունը մինչև մարդիկ կարողանան իրացնել սերտիֆիկատները», - Շիրակի մարզի քաղաքային բնակավայրում բնակվող տեղահանված անձ, իզական սեռի, 36-45 տարեկան

Ստորև կուսումնասիրենք յուրաքանչյուր ծրագիրը, դրանց շրջանակներում իրականացված միջոցառումներն ու արձանագրված արդյունքներն ու բացթողումներն առանձին-առանձին:

ԾՐԱԳԻՐ 1088 - ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակ. Բնակչության կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովմանը միտված պայմանների ստեղծում:

Վերջնական արդյունքի նկարագիրը. Կայուն և ժամանակավոր զբաղվածների թվաքանակի աճ:

2025 թվականին Սոցիալական պաշտպանության բյուջեից ծրագրին կհատկացվի 1.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշի՝ 1.4 մլրդ դրամի համեմատ, արդյունքում ծրագրի ֆինանսավորումը կավելանա շուրջ 293 մլն դրամով՝ 20.4 տոկոսով և կկազմի ընդհանուր սոցիալական բյուջեի 0.2 տոկոսը (Աղ.7):

ԾԲ ծրագիր/միջոցառում		2024 տարեկան, փաստացի (հազ դրամ)	2025 տարեկան, պլան. (հազ դրամ)	2025-2024 տարբերություն (հազ դրամ)	2025/2024 (%)
1088	Զբաղվածության ծրագիր	1,440,024.1	1,733,100.0	293,075.9	20.4
1088-12022	2023 թ. ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրում	895,293.0	873,150.0	22,143	-2.5

Աղյուսակ 7. Զբաղվածության ծրագրի բյուջեն տարեկան՝ 2024-2025թթ.³⁵

³⁵ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ: Ծախսերն ըստ ծրագրերի և միջոցառումների, փաստացի ցուցանիշներ 2020-2024թթ.:
https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

Ծրագրի՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ուղղված միջոցառմանը (դասիչ՝ 12022) 2025 թականին պետական բյուջեից կհատկացվի 873 մլն դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ կնվազի 2.5 տոկոսով: Արդյունքում, միջոցառման մասնաբաժինը Զբաղվածության ծրագրի բյուջեում կկազմի 0.5 տոկոս, ինչը կա 0.1 տոկոսային կետով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից:

Այս ծրագրի և միջոցառման կատարողականի ընդհանուր պատկերացումը կազմելու համար դիտարկվել է 2025 թվականի 9 ամիսների կատարողականը:

2025 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում պետական բյուջեից հատկացվել է 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով 57.4 տոկոս կատարողական (միջին մակարդակ), ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 833 մլն դրամով կամ 1.4 տոկոսով: Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստացի ցուցանիշների տարբերությունը կազմում է 1 մլրդ դրամ (Աղ. 8):

ԾԲ ծրագիր/միջոցառում		2024 9 ամիս, փաստացի (հազ դրամ)	2025 9 ամիս, ճշտված պլան (հազ դրամ)	2025 9 ամիս, փաստացի (հազ դրամ)	2025/2024 9 ամիս (%)	2025թ. և 2024թ. տարբե- րությունը 9 ամիս	Կատա- րողական (%)
1088	Զբաղվածության ծրագիր	964,785.3	2,295,590.0	1,316,961.1	1.4	833,093.9	57.4
1088-12022	2023 թ. ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրում	523,778.4	616,875.0	438,663.2	-16.3	-85,115.2	71.1

Աղյուսակ 8. Զբաղվածության ծրագրի և 12022 միջոցառման բյուջեն ինն ամիսների դրությամբ՝ 2024-2025թթ.³⁶

ՀՀ ֆինանսների նախարարություն. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենք. Օրենքի հավելվածներ: Հավելված N1 աղյուսակ N2. Ըստ ծրագրերի և միջոցառումների:

<https://minfin.am/hy/page/petakan-byuje-2025t>

Հեղինակի հաշվարկներ:

³⁶ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի 9 ամիսների հաշվետվություններ: Ծախսային քաղաքականություն: Հավելվածներ՝ 5. Արդյունքային ցուցանիշներ (ըստ պատասխանատուների) 2024-2025թթ.:

<https://minfin.am/hy/page/hy-hashvetvutyunner>

Հեղինակի հաշվարկներ:

Զբաղվածության ծրագրի՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ուղղված միջոցառմանը 2025 թվականի ինն ամիսներին տրամադրվել է 438.7 մլն դրամ՝ հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի 616.9 մլն դրամի համեմատ, ինչի արդյունքում հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի և փաստացի ցուցանիշների տարբերությունը կազմել է 178.2 մլն դրամ: Տարբերությունը³⁷ պայմանավորված է նախատեսվածի համեմատ նախորդ տարվա կնքված պայմանագրերի՝ ժամկետից շուտ դադարեցմամբ, ինչպես նաև սահմանված պայմանագրերի թվից պակաս քանակով կնքման հետևանքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ միջոցառումը նվազել է 85 մլն դրամով կամ 16.3 տոկոսով, չնայած ապահովվել է 71.1 տոկոս կատարողական (միջին մակարդակ):

Արդյունքային ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2025 թվականի 9 ամիսների ընթացքում Զբաղվածության ծրագրի՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված շահառուների փաստացի թիվը կազմել է 631 մարդ, տարեկան ճշտված 1000 պլանի համեմատ (Աղ. 9) : Ծրագրի բաղադրիչներով ինն ամիսների կատարման պատկերը հետևյալն է.

- Ուսուցման դասընթացներին մասնակցել է 81 շահառու (տարեկան պլան՝ 230):
- Աշխատանքային փորձի ձեռքբերման և աշխատանքի տեղավորման ուղղությամբ ընդգրկվել է 483 շահառու (տարեկան պլան՝ 430)՝ ապահովելով բարձր ցուցանիշ :
- Ուսուցման, աշխատանքային փորձի ձեռքբերման և աշխատանքի տեղավորման համակցված բաղադրիչում ընդգրկվել է 67 շահառու (տարեկան պլան՝ 340):

Ծրագիր/միջոցառում 1088-12022	2024 թ. 9 ամիսների փաստաց	2025 թ. 9 ամիսների ճշտված պլան	2025 թ. 9 ամիսների փաստացի
Միջոցառման մեջ ընդգրկվածների թիվը	1266	1000	631
ա) ուսուցման մեջ ընդգրկված անձինք	4	230	81
բ) աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացում ընդգրկված անձինք	1240	430	483
գ) ուսուցման և աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացում ընդգրկված անձինք	22	340	67

³⁷ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի կատարման վերլուծություն. 2025 թվականի 9 ամիս: https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

Աղյուսակ 9. 1088-12022 միջոցառման արդյունքային չափորոշիչների կատարողական 2025թ. ինն ամիսների³⁸


2024 և 2025 թվականների ինն ամիսների համադրությունը ցույց է տալիս ծրագրում ընդգրկված շահառուների թվի նվազում: Եթե 2024 թվականի ինն ամիսներին ընդգրկված էր 1,266 շահառու, ապա 2025 թվականին այդ թիվը կազմել է 631, ինչը նախորդ տարվա համադրելի ցուցանիշից պակաս է 635 շահառուով կամ մոտ 50 տոկոսով: Ուսուցման բաղադրիչում 2025 թվականին մասնակցել է 81 շահառու, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 77 շահառուով կամ 20.25 տոկոսով: Աշխատանքային փորձի ձեռքբերման և աշխատանքի տեղավորման բաղադրիչում 2025 թվականին ընդգրկվել է 483 շահառու, ինչը 757-ով պակաս է 2024 թվականի ինն ամիսների տվյալներից՝ ներկայացնելով մոտ 40 տոկոս նվազում: Ուսուցման և աշխատանքային փորձի համակցված բաղադրիչում 2025 թվականին ընդգրկվել է 67 շահառու, ինչն ավել է 45 շահառուով կամ շուրջ 3 տոկոսով՝ 2024 թվականի համապատասխան ցուցանիշից:

2025 թվականին տարեկան կտրվածքով նախատեսված է ծրագրի շահառուների թիվը սահմանել 1000, որից 230 շահառու կընդգրկվի ուսուցման, 430 շահառու՝ աշխատանքային փորձի ձեռքբերման և 340-ը՝ ուսուցման և աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացներում:

ԼՂ-ից բռնի տեղահանվածների շրջանում իրականացված որակական հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցված 117 անձանց 53 տոկոսը նախկինում երբեք չի լսել այս աջակցության ծրագրի մասին, իսկ 35.9 տոկոսը և 11.1 տոկոսը համապատասխանաբար լսել են սոցիալական ցանցերից և բարեկամներից/ընկերներից

³⁸ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի 9 ամսիների հաշվետվություններ: Ծախսային քաղաքականություն:
Հավելվածներ՝ 5.Արդյունքային ցուցանիշներ (ըստ պատասխանատուների) 2024-2025թթ.:
https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner
Հեղինակի հաշվարկներ:


(Գծ. 10):



Գծապատկեր 10 . Զբաղվածության ծրագրի տեղեկացվածության մակարդակը, տոկոս

Եվ միայն 2.7 տոկոսն են ծրագրի մասին տեղեկացել պետական մարմիններից, այդ թվում՝ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից և միասնական սոցիալական ծառայությունից: Արդյունքում, պետք է փաստել որ իրազեկվածության մակարդակը բավարար չէ և անհրաժեշտություն կա բարձրացնել իրազեկվածությունը:

Հարցվածների միայն 2.6 տոկոսն է օգտվել զբաղվածության ծրագրից: Ըստ հարցման մասնակիցների՝ տրամադրված աջակցությունը հիմնականում չի օգնել լուծելու իրենց զբաղվածության խնդիրը, իսկ 33.3 տոկոսը նշել է, որ մասամբ է օգնել (Գծ. 11):



Գծապատկեր 11 . Զբաղվածության ծրագրի աջակցության ազդեցությունը զբաղվածության խնդրի լուծման վրա, տոկոս

Ծրագրի բազմակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ զբաղվածության ծրագիրը չի դարձել զանգվածային ինտեգրման գործիք և պլանավորումը հաճախ տեղի է ունենում իրավիճակին զուգընթաց: Ընդհանուր միջոցառման տեսանկյունից նկատելի է միայն քանակական ցուցիչների ընդգրկումը, որոնք ապահովում են ծրագրի կատարողականի մակերեսային գնահատումը, սակայն չեն բավարարում ծրագրի արդյունավետության, ազդեցության և որակի ամբողջական պատկերը: Քանակական տվյալների ուսումնասիրությունն ու որակական հարցումների հետ համադրումը ցույց են տալիս իրազեկվածության և ընդգրկվածության հաճախ ցածր մակարդակը, ինչպես նաև ֆինանսական կատարողականի մակարդակը, սակայն չեն գնահատում ուսուցման որակը, աշխատանքի տեղավորման հաջողությունը, շահառուների կարիքների բավարարումը և ծրագրի ազդեցությունը նրանց տնտեսական ինտեգրման վրա: Լիարժեք գնահատման համար անհրաժեշտ է ներառել նաև որակական ցուցիչներ, հարցաշարեր և արդյունքների մասին հետագա տվյալներ:

ԾՐԱԳԻՐ 1098 - ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

***Ծրագրի նպատակ.** Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող անօթևան անձանց բնակարանային ապահովման աջակցություն:*

***Վերջնական արդյունքի նկարագիրը.** Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող անօթևան անձանց բնակարանային ապահովվածության բարելավում:*

Բնակարանային ապահովման ծրագիրը ներառում է յոթ միջոցառում, որոնցից մեկը վերաբերում է Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին՝ «Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության տրամադրում» միջոցառումը (դասիչ՝ 12007): Վերջինիս նպատակն է Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության տրամադրումը:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատվությամբ: Այն հնարավորություն է տալիս ԼՂ առանձին շրջաններից տեղահանված ընտանիքներին ձեռք բերել, վերակառուցել և կառուցել իրենց սեփական բնակարանը: Միջոցառման շրջանակում պետությունը սուբսիդավորում է նաև անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման համար գանձվող վճարները:

Բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը՝ ԼՂ բռնի տեղահանված ընտանիքների համար, իրականացվում է աջակցության հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

- բնակարանի (կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի) կամ անհատական բնակելի տան ձեռքբերման հավաստագրի տրամադրում,
- անհատական բնակելի տան կառուցման հավաստագրի տրամադրում:

Բնակարանային ապահովման ծրագրի մանրամասները ներկայացված են ԱՍՀՆ կայքէջում³⁹:

2025 թվականին Սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեից Բնակարանային ապահովման ծրագրին տրամադրվել է 12 մլրդ դրամ, ինչը մոտ երկու անգամ գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը (Աղ. 10): 2024 թվականին ծրագրին փաստացի հատկացվել է 8 մլրդ դրամ, իսկ այս միջոցառմանը՝ 4.7 մլրդ դրամ, ինչը կազմել է ծրագրի բյուջեի 58.3 տոկոսը:

ԾԲ ծրագիր		2024 մլն դրամ, հազ դրամ (փաստացի)	2025 մլն դրամ, հազ դրամ (պլանային)	2025/2024 (%)
1098	Բնակարանային ապահովում	8,008,705.3	12,006,785.5	49.9
1098-12007	ԼՂ-ի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության տրամադրում	4,670,249.9	7,067,451.0	51.3

Աղյուսակ 10. Բնակարանային ապահովման ծրագրի բյուջեն 2024-2025թթ.⁴⁰

³⁹ Աղբյուրը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային ապահովման ծրագիր
բնակարանային ապահովման ծրագիր
<https://www.mlsa.am/Programs-And-Services/151>

⁴⁰ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ: Ծախսերն ըստ ծրագրերի և միջոցառումների, փաստացի ցուցանիշներ 2020-2024թթ.:

Տարեկան աճը կազմել է շուրջ 50 տոկոս: Չնայած հատկացումների նման աճին՝ ծրագրի կշիռը սոցիալական պաշտպանության ոլորտի ընդհանուր ծախսերում մնում է համեմատաբար փոքր. 2025 թվականին այն կկազմի 1.33 տոկոս՝ նախորդ տարվա 0.94 տոկոսի դիմաց: 2025 թվականին պետական բյուջեից այդ ծրագրի միջոցառմանը կտրամադրվի 7 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 2 մլն դրամով կամ 51.3 տոկոսով:

Ծրագրի արդյունավետության տեսանկյունից արձանագրվում են տարբեր արդյունքներ: Վերջինս համեմատվել է կատարողականի գնահատմամբ՝ հաշվի առնելով նաև 2025 թվականի ինն ամիսների արդյունքները:

2025 թվականի ինն ամիսների ընթացքում բնակարանային ապահովման ծրագիրը բավականին ընդլայնվել է (Աղ. 6): Եթե 2024 թվականի նույն ժամանակահատվածում ծախսվել էր 4.8 մլրդ դրամ, ապա 2025 թվականի փաստացի ծախսը կազմել է 9.4 մլրդ դրամ՝ ապահովելով 2 անգամ կամ 4.6 մլրդ դրամ աճ, իսկ կատարողականը կազմել է 80.2 տոկոս (բավարար մակարդակ): Աճը հիմնականում պայմանավորված է եղել⁴¹ սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծախսերի՝ 5 անգամ (2.9 մլրդ դրամ) և Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծախսերի 34.9 տոկոս (1.1 մլրդ դրամ) աճով:

Մեկ այլ կարևոր բաղադրիչը սույն ծրագրի «Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական տրամադրում» միջոցառումն է: Այս միջոցառմանը 2024 թվականի ինն ամիսների ընթացքում հատկացվել է շուրջ 3.3 մլրդ դրամ, իսկ 2025 թվականին՝ 4.4 մլրդ դրամ՝ 91.1 տոկոս կատարողականով (բարձր մակարդակ), ինչը 1.1 մլրդ դրամով կամ 35 տոկոսով ավել է նախորդ տարվա ցուցանիշից: Չնայած 2025 թվականի ինն ամիսներին

https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

ՀՀ ֆինանսների նախարարություն. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենք. Օրենքի հավելվածեր: Հավելված N1 աղյուսակ N2. Ըստ ծրագրերի և միջոցառումների

https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t

Հեղինակի հաշվարկներ:

⁴¹Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի կատարման վերլուծություն. 2025 թվականի 9 ամիս:

https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է ծրագրին հատկացնել 11.8 մլրդ դրամ, սակայն փաստացի ծախսը կազմել է 9.4 մլրդ դրամ (Աղ. 11):

ԾԲ ծրագիր/միջոցառում		2024 9 ամիս, փաստացի (հազ դրամ)	2025 9 ամիս, ճշտված պլան (հազ դրամ)	2025 9 ամիս, փաստացի (հազ դրամ)	2025/2024 9 ամիս (%)	2025թ. և 2024թ. տարբերությունը 9 ամիս	Կատարողական (%)
1098	Բնակարանային ապահովման ծրագիր	4,821,413.0	11,755,765.4	9,427,548.2	2	4,606,135.2	80.2
1098-12007	Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության տրամադրում	3,261,511.98	4,825,588.2	4,398,375.6	34.9	1,136,863.62	91.1

Աղյուսակ 11. Բնակարանային ապահովման ծրագրի և 12007 միջոցառման բյուջեն ինն ամիսների դրությամբ՝ 2024-2025թթ.⁴²

Միջոցառման համար 2025 թվականի հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 4.8 մլրդ դրամ, սակայն փաստացի ծախսը կազմել է 4.4 մլրդ դրամ, ինչը մոտ 427 մլն դրամով պակաս է պլանավորված ծախսից: Այս տարբերությունը պայմանավորված է նախատեսված թվի համեմատ պետական աջակցության ստացող շահառու ընտանիքների թվի տարբերությամբ:

Մինևույն ժամանակ, շահառուների ընդգրկման տեսանկյունից ցուցանիշներն ավելի բարձր են. փաստացի աջակցություն ստացել է 3640 ընտանիք, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ավել է 1,293-ով (Աղ. 12):

Ծրագիր/միջոցառում 1098-12007	2024 թ. 9 ամիսների փաստացի	2025 թ. 9 ամիսների ճշտված պլան	2025 թ. 9 ամիսների փաստացի
Ընտանիքների թիվ	2,347	4,167	3,640

Աղյուսակ 12. 1098-12007 միջոցառման արդյունքային չափորոշիչների կատարողական 2025թ. ինն ամիսների⁴³

⁴²Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի 9 ամսների հաշվետվություններ: Ծախսային քաղաքականություն: Հավելվածներ՝ 5.Արդյունքային ցուցանիշներ (ըստ պատասխանատուների) 2024-2025թթ.: https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

Հեղինակի հաշվարկներ:

⁴³Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի 9 ամսների հաշվետվություններ: Ծախսային քաղաքականություն: Հավելվածներ՝ 5.Արդյունքային ցուցանիշներ (ըստ պատասխանատուների) 2024-2025թթ.: https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

2025 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների թիվը նախատեսվում է սահմանել 4,167, ինչը նախորդ տարվա նկատմամբ կավեանա 1032-ով կամ 13.3 տոկոսով: 2025 թվականի ինն ամիսների ընթացքում միջոցառումից օգտվել է 3,640 ընտանիք:


Սույն ծրագրի առավել արդյունավետ վերլուծության համար իրականացված փորձագիտական հարցազրույցի ընթացքում ներկայացվել են 12007 միջոցառման մոնիթորինգի արդյունքները, որոնք իրականացվել են 2023-2024 թվականի տարեկան արդյունքների հիման վրա: Պետք է նշել, որ ծրագիրը գործում է 2022 թվականից, և այդ ընթացքում նախատեսվել է շուրջ 4,000 ընտանիքի տրամադրել հավաստագիր: Այս տեսանկյունից, կարևոր է արդյունքային չափանիշներում ներառել նաև այն ընտանիքների քանակը, ովքեր իրացրել են հավաստագրերը: Քանի որ, ըստ ծրագրի պայմանների, շահառուները կարող են կա՛մ ձեռք բերել անշարժ գույք, կա՛մ կառուցել բնակելի տուն, նպատակահարմար կլինի արդյունքային ցուցանիշներում նաև ընդգրկել այդ պայմաններից օգտվողների թիվը:

Բնակարանային ապահովման ծրագիրը, հատկապես 12007 միջոցառումը, 2024-2025 թվականներին արձանագրել է ֆինանսավորման և շահառուների ընդգրկման զգալի աճ՝ արձագանքելով բռնի տեղահանված ընտանիքների սոցիալական պահանջարկին: Կատարողականի ցուցանիշները վկայում են գործող աջակցության մեխանիզմների համեմատաբար արդյունավետ և հասցեական կիրառման մասին:

Սակայն պետք է ուշադրություն դարձնել, թե ինչքանով է հասցեական և նպատակային եղել վերջնական արդյունքը: Պլանային և փաստացի ցուցանիշների միջև առկա շեղումները վկայում են ծրագրի գործիքակազմի հետագա կատարելագործման անհրաժեշտության մասին: Մասնավորապես՝ նպատակահարմար է ընդլայնել արդյունքային ցուցանիշների շրջանակը՝ ներառելով ոչ միայն հավաստագրեր ստացած ընտանիքների թիվը, այլ նաև դրանց իրացման թվաքանակը, գործընթացի տևողությունը, առաջացող խոչընդոտները և ֆինանսական կազմակերպությունների հետ փոխգործակցության խնդիրները: Այս ուղղությամբ քայլերը կարող են նպաստել ծրագրի

իրական ազդեցության բարձրացմանը և բնակարանային ապահովման քաղաքականության առավել կայուն և կանխատեսելի իրականացմանը:

Անդրադառնալով ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց շրջանում իրականացված որակական հարցումների տվյալներին, արձանագրում ենք, որ հարցվածների կեսից ավելին տեղեկացված է ծրագրի վերաբերյալ և նրանց շուրջ 17 տոկոսը տեղեկացել է պետական մարմիններից, իսկ 42 տոկոսը՝ սոցիալական մեդիայից (Գծ. 12):



Գծապատկեր 12. Բնակարանային ապահովման ծրագրի տեղեկացվածության մակարդակը, տոկոս

Սակայն ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հարցվածների մոտ 31 տոկոսը նախկինում չի լսել այս աջակցության ծրագրի/միջոցառման մասին: Հարցվածների միայն 6.3 տոկոսն է օգտվել բնակարանային ապահովման այս ծրագրից: Ուշագրավ է նաև այն փաստը, որ հարցման մասնակիցների միայն 14.3 տոկոսն է նշել, որ սույն ծրագրով տրամադրված սոցիալական աջակցությունն օգնել է լուծել բնակարանային ապահովման խնդիրը, իսկ 85.7 տոկոսը նշել է, որ տրամադրված աջակցությունը մասամբ է օգնել:

Որակական հարցման մասնակիցները, ովքեր օգտվել են ծրագրից, նշում են, որ իրենց համար աջակցության դիմելու գործընթացը եղել է հիմնականում պարզ և հասկանալի: Եվ ծրագրից օգտված քաղաքացիները նշում են, որ ծրագրի աջակցությունը լիովին կամ մեծամասամբ օգնել է, որպեսզի իրենք լուծեն իրենց բնակարանային ապահովման խնդիրը: Իսկ հարցին, թե արդյո՞ք տրամադրված աջակցությունը

համապատասխանել է ձեր և/կամ ձեր ընտանիքի կարիքներին ծրագրից օգվածների զգալի մասը նշում է, որ մասամբ է համապատասխանել (71.4 տոկոս) իրենց կարիքներին և որպես սրա հիմնական պատճառ նշում են բնակարանների ձեռքբերման բարձր գները:

«Քանի որ բնակարանները թանկացել էր գնել ենք ոչ բարվոք տուն որտեղ բացի վերանորոգումը չի եղել կոմունալ ապահովում (էլեկտրաէներգիա, ջուր, գազ): Մեփական ֆինանսական ռեսուրսներով կարողացել են կատարել փոքր վերանորոգում և միայն էլեկտրաէներգիան և ջուրը դառնալ բաժանորդ, իսկ գազի համար չի հերիքում առկա ֆինանսական ռեսուրսները, քանի որ մոտ 800 հազար դրամ են պահանջում: Այժմ բնակվում են վարձով» - Լոռու մարզի քաղաքային բնակավայրում բնակվող տեղահանված անձ, իգական սեռի, 18-25 տարեկան

ԾՐԱԳԻՐ 1225 - ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակ. Օժանդակել ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքով ընտանիքների առջև ծառացած սոցիալական խնդիրների բացասական հետևանքների մեղմմանը:

Վերջնական արդյունքի նկարագիրը. Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների առաջացրած սոցիալական խնդիրների բացասական հետևանքները մեղմելու նպատակով ընտանիքներին դրամական աջակցության տրամադրում:

Սոցիալական պաշտպանության հաջորդ ծրագիրը՝ «Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն»: Այս ծրագիրը ձևավորվել է 2024 թվականին՝ նախկինում ՏԿԵՆ-ի պատասխանատվությամբ իրականացվող «Աջակցություն փախստականների ինտեգրմանը» ծրագրից երեք միջոցառումների՝ ԱՍՀՆ փոխանցման արդյունքում: Սույն փոփոխության արդյունքում, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո ստեղծվել է առանձին բյուջետային ծրագիր, որն ուղղված է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կարիքների բարելավմանը:

Ծրագրի ֆինանսավորումը 2024 թվականին իրականացվել է պետական բյուջեի ֆինանսավորմամբ, սակայն *ՀՀ կառավարության 2023թ. հոկտեմբերի 12-ի N 1763-Լ որոշման համաձայն՝* ծախսերի մի մասը փոխհատուցվել է դոնոր կազմակերպությունների կողմից: Սա վկայում է, որ ծրագիրը գործարկելիս ներդրում են ունեցել նաև միաջգային գործընկեր կազմակերպությունները, ինչը նպաստել է ծրագրի իրականացման արդյունավետությանը:

2025 թվականին ծրագիրը շարունակվել է հիմնականում Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար՝ ժամանակավոր կացարաններում բնակվելու, կոմունալ ծառայությունների և սոցիալական ծախսերի ծածկման նպատակով: Ծրագրի իրականացումը, ինչպես և նախորդ տարիներին, ապահովել է առաջնային աջակցություն այն խմբերի համար, որոնք շարունակում են մնալ սոցիալ-տնտեսական խոցելիության բարձր մակարդակում:

2025 թվականին ծրագիրը որոշակի փոփոխություններ է կրել միջոցառումների կառուցվածքի առումով: Եթե 2024 թվականին ծրագրում գործել են երեք առանձին միջոցառումներ՝ *«Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին առաջնային սպառողական ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցություն»*, *«Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին միանվագ դրամական աջակցություն»* և *«Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցություն»*, ապա 2025 թվականին միջոցառումների քանակը նվազել է՝ հասնելով երկուսի: Առաջինը՝ *«Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին օժանդակելու աջակցություն»*, որի նպատակն է ապահովել սոցիալական աջակցության տրամադրում և նպաստել բնակարանային խնդիրների լուծմանը: Երկրորդը՝ *«Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր բնակության կացարանների կոմունալ և տնտեսական ծախսերի փոխհատուցում»*, որը նախատեսված է կացարաններում ընդհանուր օգտագործման, էլեկտրաէներգիայի, ջրմուղկոյուղու ծախսերի փոխհատուցման, ինչպես նաև այդ կացարանների պահպանման աշխատանքների կազմակերպման համար: Արդյունքում, կարելի է փաստել, որ 2024 թվականի *«Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցություն»* միջոցառումը 2025 թվականին բաժանվել է երկու բաղադրիչի՝ ապահովելով թիրախ խմբի սոցիալական խնդիրների լուծումը:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված առանձին խմբերի անձանց կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության շրջանակում 2025 թվականի ապրիլից մինչև դեկտեմբեր (9 ամիս) շահառուներին կտրամադրվի՝

- ապրիլ-հունիս՝ 40 հազար դրամ,
- հուլիս-դեկտեմբեր՝ 30 հազար դրամ:

2025 թվականի հունիսից մինչև դեկտեմբեր (7 ամիս)՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կարիքավոր ընտանիքներին լրացուցիչ և հրատապ սոցիալական աջակցության նպատակով կտրամադրվի՝

- 40 հազար դրամ,
- երկորդ անդամից սկսած՝ 10 հազար դրամ:

Ըստ արդյունքների՝ 2024 թվականին ծրագրի բյուջեն կազմել է 60 մլն դրամ կամ սոցիալական պաշտպանության ծախսերի 7 տոկոսը: 2025 թվականին ծրագրին կհատկացվի 35 մլն դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ պակաս է 25.6 մլրդ դրամով կամ 42 տոկոսով: 2025 թվականին ծրագիրը սոցիալական պաշտպանության ընդհանուր բյուջեում կկազմի 3.86 տոկոս (Աղ. 13):

ԾԲ ծրագիր		2024 մլն դրամ, հազ դրամ	2025 մլն դրամ, հազ դրամ	2025/2024 (%)
1225	Ճգնաժամների հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	60,631,180.4	35,000,000.0	-42.3
1225-12017	Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին միանվագ դրամական աջակցության տրամադրում	165,999.9	-	-
1225-12018	Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցություն	58,325,430.5	35,000,000.0	-40.0
1225-12019	Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին առաջնային սպառողական ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցություն	2,135,750.0	-	-

Աղյուսակ 13. Ճգն. հակազդման և արտ. իրավիճ. հետև. նվ. և վերացման նպ.՝ առանձին սոց. խմբերին տրվող սոց. աջակցություն ծրագրի բյուջեն 2024-2025թթ.⁴⁴

⁴⁴Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ: Ծախսերն ըստ ծրագրերի և միջոցառումների, փաստացի ցուցանիշներ 2020-2024թթ.:

https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

ՀՀ ֆինանսների նախարարություն. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենք.

Օրենքի հավելվածեր: Հավելված N1 աղյուսակ N2. Ըստ ծրագրերի և միջոցառումների

https://minfin.am/hy/page/petakan_byuje_2025t

Հեղինակի հաշվարկներ:

Այս ծրագրի՝ 12017 միջոցառմանը 2024 թվականին հատկացվել է մոտ 166 մլն դրամ, իսկ 12019 միջոցառմանը՝ 2.1 մլրդ դրամ, սակայն, հաշվի առնելով, որ սույն միջոցառումները 2025 թվականին դադարեցվել են, ուստի տարեկան տվյալներ առկա չեն:

2025թ. ինն ամիսների ընթացքում հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 31 մլրդ դրամ, սակայն փաստացի 29.2 մլրդ դրամ է տրամադրվել *Ճգնաժամների հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցության* ծրագրի «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին օժանդակելու համար աջակցություն» միջոցառման շրջանակներում՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 94.2 տոկոսը (բարձր մակարդակ) (Աղ. 14): Տարբերությունը կազմել է 1.8 մլրդ դրամ կամ 5.8 տոկոս:

ԾԲ ծրագիր/միջոցառում		2024 9 ամիս, փաստացի (հազ դրամ)	2025 9 ամիս, ճշտված պլան (հազ դրամ)	2025 9 ամիս, փաստացի (հազ դրամ)	Կատա- րողակա ն (%)	2025/202 4 9 ամիս (%)	2025թ. և 2024թ. տարբե- րություն
1225	Ճգն. հակազդման և արտ. իրավիճակների հետևանքների նվ. և վերացման նպատակով՝ առանձին սոց. խմբերին տրվող սոց. աջ.	40,263,600.5	31,028,318.2	29,216,199.3	94.2	-27.4	11,047,401.5
1225-12018	Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին օժանդակելու համար աջակցություն	37,921,500.5	31,000,000.0	29,216,199.3	94.2	23	8,705,301.5
1225-12021	Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր բնակության կացարանների կոմունալ և տնտեսական ծախսերի փոխհատուցում	-	28,318.2	-	0.0	-	-

Աղյուսակ 14. 1225 ծրագրի և 12018, 12021 միջոցառումների բյուջեն ինն ամիսների դրությամբ՝ 2024-2025թթ.⁴⁵

Ծրագրի ծախսերը 27.4 տոկոսով կամ ավելի քան 11 մլրդ դրամով զիջել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Այդ տեսանկյունից, 2025 թվականի ինն ամիսների ընթացքում ներդրված 12021 միջոցառմանը ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 28.3 մլն դրամ, սակայն փաստացի այն չի տրամադրվել: Հիմնական

⁴⁵Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի 9 ամսիների հաշվետվություններ: Ծախսային քաղաքականություն: Հավելվածներ՝ 5.Արդյունքային ցուցանիշներ (ըստ պատասխանատուների) 2024-2025թթ.: https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner
Հեղինակի հաշվարկներ:

պատճառը պայմանավորված է Տաշիրի համայնքապետարանի և Գյումրու բժշկական կենտրոնի հետ պայմանագրի կնքման հանգամանքով, որը հաստատման փուլում է: Սա ցույց է տալիս, որ բյուջեի կրճատման պայմաններում ծրագիրը գործել է բավարար ֆինանսական կարգապահությամբ:

2025 թվականի ինն ամիսների տվյալները ցույց են տալիս, որ ծրագիրը շարունակում է կարևոր դեր ունենալ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սոցիալական ապահովման ոլորտում (Աղ. 15): Այս հակասական պատկերը փաստում է, որ աջակցությունների պահանջարկը բարձր է, սակայն առանձին բաղադրիչների իրականացման մեխանիզմները դեռևս պահանջում են բարելավում:

Ծրագիր/միջոցառում շահառուներ	2024 թ. 9 ամիսների փաստացի	2025 թ. 9 ամիսների ճշտված պլան	2025 թ. 9 ամիսների փաստացի
1225-12018 Սոցիալական աջակցություն ստացող շահառուների թվաքանակ	100078	53,880	66,225
Բնակարանային ապահովման համար շահառուների թվաքանակ	-	3,300	1,731
ամիսների թիվ	8	12	9
Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կարիքավոր ընտանիքներին լրացուցիչ հրատապ աջակցություն ստացող ընտանիքների թվաքանակ	-	3,000	3,258
1225-12021 Շահառուների թիվ	-	78	0

Աղյուսակ 13. 1225-12018 և 1225-12021 միջոցառումների արդյունքային չափորոշիչների կատարողական 2025թ. ինն ամիսների⁴⁶

2025 թվականի ինն ամիսներին սոցիալական աջակցություն է ստացել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 66,225 շահառու, ինչը բարձր ցուցանիշ է, քանի որ տարեկան պլանով նախատեսվել էր 53,880 շահառու: Բնակարանային ապահովման համար աջակցության միջոցառմամբ 2025 թվականին նախատեսվում է ընդգրկել 3,300 շահառուի և ինն ամիսների ընթացքում աջակցություն է ստացել դեռևս 1,731 շահառու:


⁴⁶Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի 9 ամիսների հաշվետվություններ: Ծախսային քաղաքականություն: Հավելվածներ՝ 5.Արդյունքային ցուցանիշներ (ըստ պատասխանատուների) 2024-2025թթ.:
https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner
Հեղինակի հաշվարկներ:

Կարիքավոր ընտանիքներին լրացուցիչ հրատապ աջակցություն ստացող ընտանիքների քանակը 2025 թվականի պլանային ցուցանիշով նախատեսվում է տրամադրել 3,000 ընտանիքի և ինն ամիսների դրությամբ ընտանիքների թիվը 258-ով ավել է: Հարկ է նշել, որ 12021 միջոցառման շահառուների թվաքանակը տարեկան ճշտված պլանով սահմանվել է 78 շահառու, սակայն փաստացի շահառուների թվաքանակ ապահովված չէ: Տվյալները ցույց են տալիս, որ սոցիալական աջակցություն ստացող շահառուների թվաքանակը և հրատապ աջակցություն ստացած ընտանիքների թվաքանակը գերազանցել են պլանային ցուցանիշը, ինչը կարող է պայմանավորված լինել աջակցության նկատմամբ բարձր պահանջարկով և ժողովրդագրական ու սոցիալ-տնտեսական իրավիճակից բխող իրական կարիքների աճով:

2025 թվականին շահառուների թիվը կկազմի 58,080, որից 53,880 շահառու որպես սոցիալական աջակցություն ստացող, իսկ 4200-ը՝ բնակարանային ապահովման համար:


Ընդհանուր առմամբ, ծրագիրն արձանագրում է բարձր արդյունավետություն, որտեղ պահանջարկը հստակ արձանագրված է և առկա են արձագանքման գործուն մեխանիզմներ, սակայն բնակարանային ապահովման և ենթակառուցվածքային ծախսերի հատվածում առկա են համակարգային խնդիրներ, որոնք պահանջում են վերանայում և լրացուցիչ ինստիտուցիոնալ լուծումներ:

Անցում կատարելով ԼՂ-ից բռնի տեղահանվածների շրջանում իրականացված որակական հարցմանը, պարզ է դառնում, որ մասնակիցների 37.6 տոկոսը ծրագրի մասին լսել է սոցիալական կայքերից և հասարակական կազմակերպություններից, իսկ 12 տոկոսը՝ պետական մարմիններից (Գծ. 13):




Գծապատկեր 13. Ճգն. հակ. և արտ. իրավիճակների և վեր. նպ.՝ առ. սոց. խմբ. տրվող սոց. աջակցության ծրագրի տեղեկացվածության մակարդակը, տոկոս

Հարցման արդյունքների համաձայն ծրագրից օգտվել է մասնակցածների 30.8 տոկոսը, ինչը ցածր ցուցանիշ է: Ծրագրից օգտվողների զգալի մասը՝ 83.3 տոկոսը, կարծում է, որ տրամադրված աջակցությունը մասամբ է միայն օգնել իրենց՝ լուծելու առաջնային խնդիրները, և միայն 11.1 տոկոսն է կարծում, որ լիովին օգնել է: Իսկ մասնակիցների 38.9 տոկոսը նշում է, որ տրամադրված աջակցության չափը չի համապատասխանել իրենց և/կամ իրենց ընտանիքի կարիքներին, իսկ 55.6 տոկոսի կարծիքով աջակցությունը մասամբ է համապատասխանել կարիքներին (Գծ. 14, Գծ. 15):



Գծապատկեր 14. Ճգն. հակ. և արտ. իրավիճակների և վեր. նպ.՝ առ. սոց. խմբ. տրվող սոց. աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրված աջակցության ազդեցությունը առաջնային խնդիրների լուծման վրա, տոկոս



Գծապատկեր 15. Տրամադրված աջակցության չափի համապատասխանությունը հարցման մասնակիցների և նրանց ընտանիքների իրական կարիքներին

«Մենք ստացել ենք բնակվարձ, որով փակել ենք կոմունալ ծախսերը միայն, քանի որ տան վարձը շատ ավելի մեծ գումար է», - Արագածոտնի մարզի գյուղական բնակավայրում բնակվող տեղահանված անձ, իգական սեռի, 26-35 տարեկան

«Ծրագրի առաջին փուլում հնարավոր էր վճարել բնակվարձ և կոմունալ աջակցության գումարով, իսկ այժմ պետք է աշխատել ու վճարել վերոնշյալները, ինչի արդյունքում սննդի, հագուստի և կենցաղային այլ պարագաների համար գումար չի մնում», - Արագածոտնի մարզի գյուղական բնակավայրում բնակվող տեղահանված անձ, իգական սեռի, 36-45 տարեկան

«Ներկայումս բնակարանային վարձավճարների շուկայական գները էականորեն բարձր են, մինչդեռ պետության կողմից տրամադրվող աջակցության չափը համաչափ չէ այդ ծախսերին և իրականում բավարար չէ նվազագույն կենսապահովման պայմանները ապահովելու համար: Մա հատկապես ակնառու է քիչ անդամ ունեցող ընտանիքների պարագայում, երբ տրամադրվող աջակցությունը չի ծածկում անգամ բնակարանի վարձավճարը և կոմունալ ծառայությունների վճարները միասին: Միաժամանակ, գործող կարգավորումները սահմանում են խիստ սահմանափակ և փակ շահառուների շրջանակ՝ առանձնացնելով որոշակի կատեգորիաներ՝ մինչև 18 տարեկան երեխաներ, I կամ II խմբի

հաշմանդամություն ունեցող անձինք և 63 և ավելի տարիքի անձինք: Այս մոտեցման հետևանքով ստեղծվում է իրավիճակ, երբ բռնի տեղահանված ընտանիքների մի զգալի հատված, չնայած սոցիալապես խոցելի լինելու հանգամանքին, դուրս է մնում որևէ պետական աջակցությունից: Նման կարգավորումը չի բխում սոցիալական արդարության, համաչափության և խոցելիության անհատական գնահատման սկզբունքներից, ինչպես նաև չի ապահովում բռնի տեղահանվածների սոցիալական պաշտպանության արդյունավետ և համընդհանուր մեխանիզմ:» - Երևան քաղաքում բնակվող տեղահանված անձ, իգական սեռի, 18-25 տարեկան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջետային ծրագրերի և շահառուների կարիքների համադրումը վկայում է պետական քաղաքականության շարունակական բարելավման ձգտման մասին: Այնուամենայնիվ, հետազոտությունը վեր է հանել համակարգային և կառավարման որոշակի առանձնահատկություններ, որոնց հասցեագրումը կարող է էապես բարձրացնել իրականացվող միջոցառումների թիրախայնությունը և արդյունավետությունը:

Ուսումնասիրելով ծրագրերի ֆինանսավորման պլանային և փաստացի արդյունքները՝ կարելի է արձանագրել, որ ուսումնասիրված ծրագրերի շրջանակում փաստացի ծախսերը հիմնականում լինում են նախատեսված ցուցանիշներից ցածր: Այս հանգամանքը հատկապես ուշագրավ է այն պայմաններում, երբ ծրագրերի մեծ մասի կատարողականի մակարդակը գնահատվում է միջինից բարձր կամ բարձր: Ստացվում է հակասական պատկեր, երբ ծրագրերն ապահովում են միջին կամ միջինից բարձր կատարողական, սակայն միաժամանակ առկա է պլանավորված ֆինանսական ռեսուրսների ոչ լիարժեք օգտագործում: Այս անհամաչափությունը վկայում է, որ ծրագրերի կատարողականի բարձր մակարդակն ամբողջությամբ չի նպաստում թիրախային խմբերի կարիքների բավարարմանը: Փաստացի ծախսերի շեղումները և պլանային ու փաստացի տարեկան աճերի տեմպերի տարբերությունները վկայում են, որ ծրագրերի նախագծման փուլում ֆինանսական հաշվարկները և գործիքակազմի նախագծումը միշտ չէ, որ լիարժեք համահունչ են իրականացման մեխանիզմներին, շահառուների վարքագծին, ինչպես նաև արտաքին գործոններին: Հետևաբար, առաջանում է անհրաժեշտություն վերանայել և հստակեցնել թիրախային խմբերին ուղղված միջոցառումների կառուցվածքը, ամրապնդել շահառուների մասնակցայնության մեխանիզմները, և պարզեցնել/ստանդարտացնել իրականացման ընթացակարգերը՝ ապահովելու համար ավելի արագ և ճշգրիտ արձագանք շահառուների իրական կարիքներին:

Ծրագրերի նախագծման փուլում նախատեսված ֆինանսական միջոցները ամբողջությամբ չեն ծախսվում և փաստացի ծախսերի շեղումները պլանավորվածի նկատմամբ բավական բարձր են: Տարեկան աճերի տեմպերի համադրությամբ ևս պլանային և փաստացի արդյունքներում արձանագրվել են բավական բարձր շեղումներ: Ընդհանուր ուսումնասիրությունները և դիտարկումները հաստատում են, որ ԼՂ-ից բռնի

տեղահանվածներին ուղղված ծրագրերն առավել արդյունավետ են դրսևորվում **արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում՝ որպես հրատապ արձագանքման գործիք**։ Սակայն, երկարաժամկետ սոցիալական ներառման և կայուն ինտեգրման նպատակների համար անհրաժեշտ է անցում կատարել «հրատապ արձագանքից» դեպի **կանխատեսելի, չափելի և արդյունքահեն ծրագրային կառավարում**, որտեղ պլանավորումը, իրականացումը և գնահատումը կապվում են ոչ միայն ծախսերի, այլև իրական ազդեցության ցուցիչների հետ։ Աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքները ներկայացնենք ստորև թվարկված ուղղություններով։

Սոցիալական պաշտպանության բյուջեով իրականացվող ծրագրերի կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն։ 2025-ին սոցիալական պաշտպանության բյուջեն հասել է 905.9 մլրդ դրամի, կազմելով մոտ 26.3 տոկոս տեսակարար կշիռ պետական բյուջեի ծախսերում և 8.3 տոկոս ՀՆԱ-ում։ 2020–2024-ին կատարողականը կայուն բարձր է, ինչը ցույց է տալիս ֆինանսական կարգապահության բարձր մակարդակի առկայություն։ Սակայն բարձր կատարողականը ինքնին դեռ չի ապացուցում ծրագրերի **ազդեցության բարձր մակարդակը**, հատկապես՝ տեղահանվածների ինտեգրման երկարաժամկետ արդյունքների առումով։ Ազդեցության ցածր մակարդակը կարող է պայմանավորված լինել նաև արտաքին գործոններով։ Այսպես, բնակարանային ապահովման ծրագրի բյուջետային ցուցանիշների վերլուծությունը մատնանշում է տրամադրված հավաստագրերի և փաստացի գործարքների միջև առկա որոշակի անհամապատասխանություն (427 մլն դրամ թերաձախ)։ Շահառուների հետ իրականացված հարցումները վկայում են, որ այս իրավիճակը հիմնականում պայմանավորված է արտաքին գործոններով՝ անշարժ գույքի շուկայի դինամիկ փոփոխություններով և բանկային ընթացակարգերի բարդությամբ, ինչը պահանջում է բյուջետային պլանավորման առավել ճկուն մոտեցում և գործիքների հարմարեցում շուկայական պայմաններին։ Քանի որ պետական բյուջեի արդյունքային չափորշիչներում ներդրված է միայն շահառու հանդիսացող ընտանիքների թիվը, ավելի նպատակահարմար կլինի ավելացնել նաև հավաստագրերը իրացրած շահառուների թիվը ևս։

Զբաղվածության ծրագրերի՝ վերափոխում որպես մասշտաբային ինտեգրման հնարավորություն՝ և՛ ֆինանսական, և՛ բովանդակային մասով։ 2025-ին զբաղվածության ծրագրի ընդհանուր 9-ամսյա կատարողականը **57.4 տոկոս** է, իսկ տեղահանվածներին

ուղղված միջոցառմանը՝ **71.1 տոկոս**: Շահառուների փաստացի թիվը պլանավորվածի նկատմամբ բավական ցածր է, իսկ կառուցվածքով դիտվում է անհամաչափություն՝ ուսուցման և աշխատանքային փորձ/տեղավորում բաղադրիչների միջև: Ուսուցման բաղադրիչի ցածր կատարողականը թելադրում է վերանայելու առաջարկվող կրթական ուղղությունները թիրախային կերպով: Շահառուների հետադարձ կապը ցույց է տալիս գործնական և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտությունների նկատմամբ բարձր պահանջարկ, ինչը կարող է հիմք հանդիսանալ ծրագրի ուղղությունների առավել թիրախային վերաձևավորման համար: Հարկ է նշել, որ արդյունքային չափանիշները հիմնված են միայն քանակական ցուցանիշների հիման վրա, սակայն նպատակահարմար է համատեղել որակական ցուցանիշների հետ, որոնք թույլ կտան հասկանալ, թե ինչքանով է ծրագիրը բավարարել շահառուների աշխատանքային և գիտելիքահեն կարողությունների զարգացմանը և այլն: Այդպիսով, հնարավոր կլինի ապահովել ԼՂ-ից բռնի տեղահանավածների հմտությունների զարգացումը, լայնածավալ ինտեգրումը աշխատաշուկայում ինչն էլ կբերի ֆինանսական կարիքների բավարարմանը և կայունության ապահովմանը:

Ճգնաժամային աջակցությունից դեպի երկարաժամկետ ինքնաբավություն անցման կարևորում. Ճգնաժամային աջակցության ծրագրերի բարձր պահանջարկը (պլանավորվածից 23 տոկոսով ավելի) վկայում է շահառուների դեռևս առկա խոցելիության մասին: Միաժամանակ պետք է փաստել, որ ծրագրերի առավել բարձր կատարողականը հիմնականում ապահովվում է ճգնաժամային կամ արտակարգ իրավիճակների պայմաններում: Սակայն կարևոր է ապահովել ծրագրերի համակարգված և շարունակական իրականացումը նաև կայուն պայմաններում՝ ուղղված սոցիալական ռիսկերի կանխարգելմանը և շահառուների ինքնաբավության բարձրացմանը: Այս տեսանկյունից հարկավոր է մատնանշել սոցիալական աջակցության ծրագրերից դեպի տնտեսական ինտեգրման ծրագրեր սահուն անցումն ապահովող լրացուցիչ միջոցառումների անհրաժեշտությունը:

Բյուջետային պլանավորման մեթոդաբանության վերանայման անհրաժեշտություն. Հետազոտությունը փաստում է, որ սոցիալական պաշտպանության ծրագրերի պլանավորման հիմքում դեռևս գերակշռում է «վերնից ներքև» մոտեցումը: Հարցվածների մեծ մասը չի ներգրավվել ծրագրերի քննարկման/ձևավորման գործընթացներում, իսկ մասնակցությունը հաճախ կազմակերպվել է ՔՀԿ-ների ու միջազգային կառույցների

միջոցով: Սա նվազեցնում է ծրագրերի ընկալումը, իրագեկվածությունը և «իրական կարիքների» հաշվառումը: Կարող ենք փաստել, որ բյուջետային ծրագրային հայտերը ձևավորվում են հիմնականում նախորդ տարիների վիճակագրական տվյալների հիման վրա, այլ ոչ թե մասնակցային և կարիքահեն գնահատման արդյունքում: Զեկույցի որակական տվյալները ցույց են տալիս, որ շահառուների իրական կարիքների և պետական ծրագրերի առաջարկների միջև առկա է խզում, ինչը հանգեցնում է ռեսուրսների ոչ օպտիմալ բաշխման և ծրագրերի ցածր թիրախայնության:

Մոնիթորինգի ու գնահատման համակարգի կատարելագործումը՝ որպես ծրագրային հաշվետվողականության հիմք. Հետազոտությունը ցույց է տալիս, որ սոցիալական պաշտպանության ծրագրերի հաշվետվողականության գործող մոդելը կառուցված է հիմնականում քանակական ցուցանիշների վրա (շահառուների թիվ, կատարման տոկոս, ծախսերի իրականացում)՝ սահմանափակ հնարավորություն տալով գնահատելու ծրագրերի իրական ազդեցությունը շահառուների կյանքի որակի, սոցիալական ներառման և կայունության վրա: Այս մոտեցման պայմաններում նույնիսկ բարձր կատարողականը կարող է չարտացոլել քաղաքականության արդյունքայնությունը, քանի որ բացակայում են համակարգային մեխանիզմներ՝ հասկանալու, թե աջակցությունն ինչ չափով է բավարարում իրական կարիքները, ինչ խոչընդոտներ են առաջանում դիմելու և օգտվելու ընթացքում, և ինչպիսին է ծրագրի ընդհանուր սոցիալական ազդեցությունը: Որակական տվյալների և շահառուների բավարարվածության գնահատման և փորձառության չափման ներառումը, ինչպես նաև ծառայությունների հասանելիության ու որակի գնահատման ներառումը կարող է դառնալ պետության համար կարևոր գործիք՝ ծրագրերի ընթացիկ օպերացիոն բարելավումների արագ իրականացման, թիրախավորման ճշգրտման, ռեսուրսների առավել արդյունավետ բաշխման և հանրային վստահության բարձրացման համար:

Այս փոփոխությունը հնարավորություն կտա անցում կատարել “քանակական կատարումից” դեպի արդյունքահեն կառավարում, որտեղ գնահատվում է ոչ միայն այն, թե ինչքան ծախսվեց կամ քանի մարդ ընդգրկվեց ծրագրում, այլ՝ ինչ որակական փոփոխություն ստացվեց շահառուի կյանքում և որքանով է մշակված և իրականացվող քաղաքականությունն իրապես լուծում սոցիալական խնդիրները:

Տեղեկատվական հասանելիության ցածր մակարդակ և հաղորդակցության բացեր. Հետազոտության արդյունքները փաստում են, որ շահառուների զգալի մասը բավարար

չափով տեղեկացված չէ պետական աջակցության գործող ծրագրերի մանրամասներին, դիմելու կարգին և չափանիշներին: Տեղեկատվական հոսքերը հաճախ սահմանափակվում են միայն առցանց հարթակներով, որոնք հասանելի չեն բոլոր խմբերին (հատկապես տարեցներին կամ գյուղական բնակավայրերի բնակիչներին): Մա հանգեցնում է նրան, որ նույնիսկ բյուջետային բավարար միջոցների առկայության դեպքում (օր.՝ Զբաղվածության ծրագիր), պոտենցիալ շահառուները չեն դիմում ծրագրերին՝ պարզապես դրանց գոյության մասին չիմանալու կամ պայմանները սխալ ընկալելու պատճառով:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջետային ծրագրերի և շահառուների կարիքների համադրումը ցույց է տալիս պետական քաղաքականության շարունակական բարելավման ձգտում և ընդհանուր առմամբ բարձր ֆինանսական կարգապահություն: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունը բացահայտում է կառավարման և ծրագրային նախագծման համակարգային առանձնահատկություններ. պլանային ու փաստացի ցուցանիշների համադրությունը հաճախ արձանագրում է փաստացի ծախսերի պլանավորվածից ցածր մակարդակ՝ նույնիսկ այն դեպքում, երբ ծրագրերի մեծ մասի կատարողականը միջինից բարձր կամ բարձր է: Այս հակասական պատկերը վկայում է, որ բյուջեի կատարողականի բարձր ցուցանիշները միշտ չեն վերածվում թիրախային խմբերի կարիքների լիարժեք բավարարման և կայուն ազդեցության: Շեղումները պայմանավորված են ինչպես գործիքակազմի և պլանային հաշվարկների՝ իրականացման մեխանիզմներին ոչ լիարժեք համահունչ լինելու հանգամանքով, այնպես էլ արտաքին գործոններով (օր.՝ անշարժ գույքի շուկայի գների փոփոխություն, բանկային ընթացակարգերի բարդություն), ինչն ակնհայտ է, օրինակ, բնակարանային ծրագրում հավաստագրերի տրամադրման և փաստացի գործարքների միջև առկա անհամապատասխանությամբ: Միևնույն ժամանակ, տեղահանվածներին ուղղված ծրագրերն առավել արդյունավետ են դրսևորվում ճգնաժամային պայմաններում՝ որպես հրատապ արձագանքման գործիք, մինչդեռ երկարաժամկետ սոցիալական ներառման և ինտեգրման համար անհրաժեշտ է անցում դեպի կանխատեսելի, չափելի և արդյունքահեն ծրագրային կառավարման:

Վերլուծության արդյունքները մատնանշում են բարեփոխումների հստակ ուղղություններ՝ ծրագրերի կառավարման արդյունավետության բարձրացում, շուկայական գործոնների հետ ծրագրային գործիքների համադրման ուժեղացում, զբաղվածության ծրագրերի բովանդակային վերափոխում՝ որպես մասշտաբային ինտեգրման հարթակ, ինչպես նաև

Ճգնաժամային աջակցությունից դեպի ինքնաբավության ու տնտեսական ինտեգրման սահուն անցում ապահովող միջոցառումների ներդրում: Կարևորագույն խնդիր է նաև պլանավորման մեթոդաբանության վերանայումը. ներկայում գերակշռող “վերնից ներքև” մոտեցումը և շահառուների մասնակցության սահմանափակությունը նվազեցնում են կարիքների հաշվառումը, թիրախավորումը և ծրագրերի ընկալումը, իսկ տեղեկատվական հասանելիության ցածր մակարդակն ու հաղորդակցության բացերը խոչընդոտում են նույնիսկ առկա միջոցների լիարժեք իրացմանը: Բացի այդ, մոնիթորինգի ու գնահատման համակարգի կատարելագործումը պետք է դիտարկվի որպես ծրագրային հաշվետվողականության հիմք. քանակական ցուցանիշներին զուգահեռ որակական տվյալների, շահառուների բավարարվածության ու փորձառության չափման, ինչպես նաև ծառայությունների հասանելիության և որակի գնահատման ներառումը թույլ կտա անցում կատարել “քանակական կատարումից” դեպի արդյունքահեն կառավարում՝ ապահովելով ավելի ճշգրիտ թիրախավորում, օպերացիոն արագ բարելավումներ, ռեսուրսների օպտիմալ բաշխում և, ամենակարևորը, կայուն սոցիալական ազդեցություն:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Սույն հետազոտությունը հանդիսանում է ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջետային ծրագրերի և շահառուների իրական կարիքների համադրման փորձագիտական վերլուծություն՝ հիմնված ինչպես քանակական և որակական տվյալների ուսումնասիրության, այնպես էլ հանրային քննարկումների և շահառուների հետ փոխգործակցության արդյունքում արձանագրված դիտարկումների վրա: Հետազոտության արդյունքները վկայում են, որ պետական քաղաքականությունը որդեգրել է բարեփոխումների դինամիկ ընթացք, սակայն բյուջետային պլանավորման և գործնական իրականացման միջև առկա են համակարգային խզումներ: Այս խզումները պայմանավորված են ինչպես արտաքին շուկայական գործոններով, այնպես էլ ներքին հաղորդակցության և մեթոդաբանական բացերով: Ստորև ներկայացված առաջարկները նպատակ ունեն վեր հանել այն կետերը, որտեղ ֆինանսական ռեսուրսների և շահառուների ակնկալիքների ներդաշնակեցումը կարող են ապահովել առավելագույն սոցիալական ազդեցություն:

Բյուջետային պլանավորման մեթոդաբանության վերանայում.

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ սոցիալական պաշտպանության ծրագրերի պլանավորման հիմքում դեռևս գերակշռում է «վերնից ներքև» մոտեցումը, ինչի պատճառով բյուջետային հայտերը հաճախ ձևավորվում են նախորդ տարիների վիճակագրության և հատկացումների հիման վրա՝ ոչ լիարժեք կարիքահեն գնահատման արդյունքում: Ուստի անհրաժեշտ է ներդնել կարիքահեն բյուջետավորման մեխանիզմներ՝ բյուջետային հայտերի մշակման փուլում պարտադիր ներառելով սոցիալական աշխատողների, թիրախային խմբերի և քաղաքացիական հասարակության հետ խորհրդակցությունների արդյունքների ամփոփագրերն ու դրանց հիման վրա ձևավորված փոփոխությունների հիմնավորումը:

Առաջարկվում է սոցիալական պաշտպանության ոլորտի գերակա ծրագրերի համար ներդնել պլանավորման պարբերական վերանայման մեխանիզմ՝ վերագնահատելով շահառուների թվաքանակը, միջին աջակցության չափը, պահանջարկի միտումները և տարվա ավարտի ծախսային կանխատեսումները: Մա հնարավորություն կտա նվազեցնել պլան-փաստացի շեղումները, բարձրացնել կանխատեսելիությունը և ապահովել ֆինանսական միջոցների առավել հասցեական բաշխում: Բացի այդ, նպատակահարմար է պետական բյուջե ներառվող յուրաքանչյուր նոր կամ փոփոխված միջոցառման համար սահմանել «իրականացման պատրաստվածության» նվազագույն չափանիշներ՝ իրավական կարգավորում, ընթացակարգերի հստակեցում, պայմանագրային հիմքերի առկայություն, տվյալների հավաքագրման և հաշվետվության մեխանիզմների պատրաստվածություն, ինչպես նաև պատասխանատվությունների հստակ բաշխում: Այս մեխանիզմը թույլ կտա նվազեցնել պլան-փաստացի ցուցանիշներում առկա շեղումները և արդյունքում կապահովի ֆինանսական հատկացումների օպտիմալ և հասցեական բաշխման ուժեղացմանը:

«Արտակարգ աջակցությունից» դեպի «անցումային աջակցություն» տրամաբանության ամրապնդում. Առաջարկվում է ճգնաժամային աջակցությունը դիտարկել որպես անցումային մեխանիզմ՝ այն ծրագրային կերպով կապելով զբաղվածության և բնակարանային լուծումների հետ, որպեսզի աջակցությունը չամրապնդի կախվածություն, այլ ապահովի ինքնաբավության աստիճանական ձևավորում: Միաժամանակ պետք է վերանայել աջակցության շրջանակը՝ նվազեցնելով չափազանց սահմանափակ թիրախավորման հետևանքով առաջացող անհավասարությունները: Կարելի է հավելել, որ անցումային աջակցությունը ուղեկցվի երկարաժամկետ սոցիալական կայունություն ապահովող զսպման մեխանիզմներով, որպեսզի պետական աջակցությունը չդառնա կարճաժամկետ ֆինանսական գործիք, այլ իրական

Խոցելիության համակցված գնահատման հստակեցում (միավորային գնահատում որպես հավելում).

Առաջարկվում է աջակցությունների սահմանման գործընթացում փակ կատեգորիաների հետ զուգահեռ կամ փուլային կերպով կիրառել խոցելիության համակցված գնահատման մոտեցում՝ կիրառելով միավորային գնահատման համակարգ: Գնահատման մեջ նպատակահարմար է ներառել, օրինակ, տեղահանման փաստը, ընտանիքի եկամուտը, աշխատանքի կարգավիճակը, բնակարանային ծանրաբեռնվածությունը, երեխաների առկայությունը, առողջական սահմանափակումները և այլ սոցիալ-տնտեսական գործոններ: Մաթույլ կտա պետական աջակցության շրջանակներից դուրս չթողնել այն ընտանիքներին, որոնք փաստացի խոցելի են, սակայն չեն համապատասխանում գործող չափորոշիչներին, այդ թվում՝ միգրացիոն ծառայություններում գրանցված, սակայն փաստացի Հայաստանում բնակվող և ծրագրերի իրական շահառու հանդիսացող անձանց:

Միաժամանակ առաջարկվում է անշարժ գույք ունեցող անձանց աջակցության իրավունքը որոշել ոչ թե գույքի առկայության փաստով, այլ դրա օգտագործելիության, արժեքի և կենսապահովման հնարավորության գնահատմամբ՝ անհրաժեշտության դեպքում թույլատրելով մասնակի մասնակցություն ծրագրերին:

Բարձր խոցելիության ընտանիքների անհատական ուղեկցման մեխանիզմի զարգացում.

Առաջարկվում է բարձր ռիսկային ընտանիքների համար զարգացնել անհատական ուղեկցման մոտեցում՝ սոցիալական աջակցությունների, զբաղվածության գործիքների, բնակարանային աջակցության և ծառայությունների հասանելիության համակցված կառավարմամբ: Այս նպատակով անհրաժեշտ է ստեղծել և գործարկել սոցիալական պաշտպանության ոլորտի բոլոր աջակցության ծրագրերի համաժամանակեցման համակարգման հարթակ, որը կապահովի տեղեկատվության փոխանակում, կրկնությունների նվազեցում և շահառուների ուղու շարունակական կառավարում:

Շուկայական իրողությունների և բնակարանային ֆինանսական գործիքների ներդաշնակեցում. Առաջարկվում է բնակարանային ապահովման ծրագրերում կիրառվող ֆինանսական գործիքները դարձնել ավելի ճկուն և համապատասխանեցնել շուկայական պահանջներին՝ ներդնելով հավաստագրերի արժեքի ինդեքսավորման մեխանիզմ (անշարժ

գույքի շուկայի գնային տատանումների և բանկային պահանջների ազդեցությունը հաշվի առնելու համար): Անհրաժեշտ է վերանայել նաև դիմումների ժամկետները՝ ապահովելով շահառուների լիարժեք մասնակցություն, ինչպես նաև աջակցության չափը՝ այն կապելով ընտանիքի կազմի և իրական կարիքների հետ:

Միաժամանակ նպատակահարմար է զարգացնել համայնքային կացարանների միջանկյալ լուծումները միայնակ շահառուների համար և մշակել բնակարանային հատուկ ենթաձրագրեր Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երիտասարդ ընտանիքների համար՝ կիրառելով արդեն գործող երիտասարդ ընտանիքների բնակարանային ապահովման փորձը:

Զբաղվածության ծրագրի բովանդակային արդիականացում. Առաջարկվում է իրականացնել զբաղվածության ծրագրերի կառուցվածքային վերանայում՝ ուսուցման միջոցների մի մասը վերաուղղելով դեպի աշխատատեղում ուսուցման և գործատուների սուբսիդավորման ձևաչափեր՝ շահառուների համար ավելի կիրառելի հմտությունների ապահովման նպատակով, և զուգահեռ իրականացնել շահառուների հետագծի ուսումնասիրություններ (օրինակ՝ աշխատանքի պահպանումը 3, 6 կամ 12 ամիս անց)՝ գնահատելու համար ոչ միայն ընդգրկումը, այլև կայուն աշխատանքի ձեռքբերման իրական արդյունքները և դասընթացների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին: Սա կխթանի տնտեսական ակտիվությունը՝ առաջարկելով կիրառելի հմտություններ, որոնք անմիջապես տանում են դեպի կայուն զբաղվածություն և ինքնաբավություն:

Տեղեկատվական հասանելիության և հաղորդակցության բարելավում (ակտիվ իրազեկում). Հետազոտությունը վեր է հանել տեղեկատվական լուրջ անհամաչափություն, որտեղ շահառուների զգալի մասը բավարար չափով իրազեկված չէ ծրագրերի մանրամասներին: Ուստի, առաջարկվում է վերանայել հաղորդակցության ռազմավարությունը՝ անցում կատարելով պասիվ առցանց տեղեկատվությունից դեպի ակտիվ իրազեկման մոդելի: Սա ներառում է համայնքային մակարդակում (գյուղաբնակ անձանց շրջանում) շարժական իրազեկման գործիքներ, պարզեցված ուղեցույցների տրամադրում, հանդիպումներ շահառուների շրջանում, տեղեկատվական նյութերի տարածում, անհրաժեշտության դեպքում՝ հեռախոսային խորհրդակցություններ, ինչպես նաև կարելի է հանրայնացնել հաջողված պատմությունների օրինակը՝ խթանելով վստահությունը ծրագրերի նկատմամբ և բարձրացնելով քաղաքացիների մասնակցության մակարդակը: Վերջիններիս կիրառումը կօգնի, որպեսզի յուրաքանչյուր շահառու գործնականորեն կարողանա օգտվել իրեն հասանելիք պետական աջակցությունից:

Մոնիթորինգի համակարգի որակական տրանսֆորմացիա. Ներկայիս բյուջետային հաշվետվողականությունը կենտրոնացած է քանակական տվյալների վրա, ինչը թույլ չի տալիս տեսնել իրական ազդեցությունը մարդկանց կյանքի վրա: Առաջարկվում է պետական մոնիթորինգի համակարգում քանակական արդյունքային չափորոշիչների հետ մեկտեղ ինտեգրել որակական և հավելյալ քանակական ցուցանիշներ (շահառուների

բավարարվածությունը, կյանքի որակի փոփոխությունը, հատկացվելիք հավաստագրերի իրացումը հասկանալու համար): Նպատակահարմար է սոցիալական պաշտպանության գերակա ծրագրերի համար սահմանել արդյունքային ցուցիչների նվազագույն փաթեթ, այդ թվում՝ բնակարանային ծրագրերի դեպքում՝ հավաստագրերի իրացման մակարդակը և չիրացման պատճառները, զբաղվածության ծրագրերի դեպքում՝ աշխատանքի տեղավորման և պահպանման ցուցիչները, ճգնաժամային աջակցության դեպքում՝ կրկնվող դիմումների հաճախականությունը և ինքնաբավության ձևավորման միտումները: Քանակական տվյալներից անցումը դեպի արդյունքահեն կառավարման թույլ կտա հաջողությունը չափել լուծված սոցիալական խնդիրներով և ապահովել ծրագրերի շարունակական կատարելագործումը:

Շահառուների բավարարվածության չափման և հետադարձ կապի պարտադիր գործարկում. Առաջարկվում է շահառուների բավարարվածության և ծրագրերից օգտվելու փորձառության գնահատումն իրականացնել պարտադիր՝ տարեկան երկու անգամ ստանդարտացված կարճ հարցաթերթերով, և արձանագրել հետադարձ կապի արդյունքների հիման վրա ծրագրային փոփոխությունների արձանագրման և հրապարակման մեխանիզմ՝ ապահովելով հաշվետվողականություն և շարունակական բարելավում:

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական պաշտպանության ծրագրերը, թեև ապահովել են բարձր կատարողական և արագ արձագանքում՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում, միաժամանակ բնութագրվում են ծրագրային պլանավորման, ֆինանսական միջոցների իրացման, թիրախավորման և կառավարման կառուցվածքային խնդիրներով: Ծրագրերի մի մասի դեպքում արձանագրվել է շահառուների ընդգրկման գերակատարում, մինչդեռ առանձին միջոցառումներ ունեցել են միջին կամ ցածր կատարողական և ֆինանսական ռեսուրսների թերծախս: Այս հանգամանքները վկայում են, որ գործող մեխանիզմները ոչ միշտ են համադրվում շահառուների իրական կարիքների և ծրագրերի նպատակների հետ:

Ներկայացված առաջարկները միտված են սոցիալական պաշտպանության ծրագրերի արդյունավետության բարձրացմանը՝ հատկապես Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց աջակցության համատեքստում: Դրանք ուղղված են պլանավորման և ֆինանսավորման գործընթացների ճշգրտմանը, վարչարարական բեռի նվազեցմանը, ծրագրերի թիրախավորմանը և կառուցվածքի օպտիմալացմանը, ինչպես նաև մոնիթորինգի և գնահատման համակարգերի խորացմանը: Առաջարկվող միջոցառումների իրականացումը թույլ կտա նվազեցնել պլանային և փաստացի ցուցանիշների միջև առկա շեղումները, ապահովել ֆինանսական ռեսուրսների նպատակային և լիարժեք օգտագործումը, ընդլայնել շահառուների ընդգրկումը և բարձրացնել ծրագրերի սոցիալական ազդեցությունը: Միաժամանակ, մասնավոր հատվածի և աշխատաշուկայի հետ կապերի ամրապնդումը կնպաստի զբաղվածության ծրագրերի կայունությանը և տեղահանված անձանց երկարաժամկետ սոցիալ-տնտեսական ինտեգրմանը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. ԼՂ բռնի տեղահանված անձանց ուղղված ծրագրերի ծախսերի համեմատություն (պլանային-փաստացի), տոկոս⁴⁷

	Զբաղվածության ծրագիր (հազ. դրամ) պլանային	Զբաղվածության ծրագիր (հազ. դրամ) փաստացի	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Տարբերություն
2020	2,041,667.2	1,941,784.6	95.1%	99,882.6
2021	2,134,581.0	1,701,980.8	79.7%	432,600.2
2022	1,384,163.4	874,699.7	63.2%	509,463.7
2023	1,050,007.7	892,126.4	85.0%	157,881.3
2024	1,816,527.7	1,440,024.1	79.3%	376,503.6
	Բնակարանային ապահովման ծրագիր (հազ. դրամ) պլանային	Բնակարանային ապահովման ծրագիր (հազ. դրամ) փաստացի	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Տարբերություն
2020	4,092,677.1	3,957,659.9	96.7%	-135,017.2
2021	1,865,371.8	821,424.0	44.0%	-1,043,947.8
2022	1,057,063.1	951,129.8	90.0%	-105,933.3
2023	3,057,246.1	2,572,718.3	84.2%	-484,527.8
2024	8,868,356.0	8,008,705.3	90.3%	-859,650.7
	Ճգն. հակ. և արտ. իր. հետևանքների նվ. և վերացման նպատակով՝ առանձին սոց. խմբ. տրվ. սոց. աջ. ծրագիր (հազ. դրամ) պլանային	Ճգն. հակ. և արտ. իր. հետևանքների նվ. և վերացման նպատակով՝ առանձին սոց. խմբ. տրվ. սոց. աջ. ծրագիր (հազ. դրամ) փաստացի	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Տարբերություն
2020	27,525,874.4	25,921,386.5	94.2%	-1,604,487.9
2211	1,020.0	1,020.0	100%	0.0
2022	-	-	-	-
2023	30,250,850.0	28,745,976.4	95.0%	-1,504,873.6
2024	65,674,450.0	60,631,180.4	92.3%	-5,043,269.6

⁴⁷ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, փաստացի ցուցանիշներ 2020-2024թթ.:
https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

Հավելված 2. ԼՂ բռնի տեղահանված անձանց ուղղված ծրագրերի փաստացի և պլանային տարեկան աճերի համեմատություն, տոկոս⁴⁸

Տարեկան աճ (%)		2021	2022	2023	2024
Զբաղվածության ծրագիր	Պլանային	4.6	-35.2	-24.1	73.0
	Փաստացի	-12.3	-48.6	2.0	61.4
Բնակարանային ապահովման ծրագիր	Պլանային	-54.4	-43.3	189.2	190.1
	Փաստացի	-79.2	15.8	170.5	211.3
Ճգն. հակ. և արտ. իր. նվ. և վեր. նպ.՝ առ. սոց. խմբ. տրվ. սոց. աջ.	Պլանային	-100	-	-	117.1
	Փաստացի	-100	-	-	110.9

Տարեկան աճ (%) պլանային	Տարեկան աճ (%) փաստացի	Տարեկան աճերի տարբերություն
-100.0	-100.0	0.0
-	-	-
-	-	-
117.1	110.9	-6.2

Հավելված 3. Սոցիալական պաշտպանության ծրագրերի պլանային և փաստացի ծախսերի համեմատություն, ինն ամիսներ, 2024-2025թթ.

Դասիչ	Ծրագրեր	2024թ. ինն ամիսների փաստ	2025թ. ինն ամիսների ճշտված պլան	2025թ. ինն ամիսների փաստ	2025թ. կատարողականը (%)	2025թ. 2024թ.-ի նկատմամբ փաստացի(%)	2025թ. և 2024թ. տարբերությունը փաստացի
-------	---------	--------------------------	---------------------------------	--------------------------	-------------------------	-------------------------------------	--

⁴⁸Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն. Պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ, փաստացի ցուցանիշներ 2020-2024թթ.:
https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner

1005	Պարզևավճարներ և պատվովճարներ	8,771,500.00	8,434,676.00	7,640,817.20	90.6	-12.89	-1,130,682.80
1011	Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն	21,900,439.90	17,822,303.90	15,877,331.10	89.1	-27.50	-6,023,108.80
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	7,079,664.00	7,796,064.00	6,137,915.90	78.7	-13.30	-941,748.10
1032	Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն	3,421,545.50	3,770,114.30	2,589,622.10	68.7	-24.31	-831,923.40
1088	Զբաղվածության ծրագիր	1,523,318.80	2,295,590.00	1,316,961.10	57.4	-13.55	-206,357.70
1098	Բնակարանային ապահովում	6,103,806.60	11,755,765.40	9,427,548.20	80.2	54.45	3,323,741.60
1102	Կենսաթոշակային ապահովություն	396,718,900.00	439,441,671.70	394,965,257.20	89.9	-0.44	-1,753,642.80
1117	Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	6,118,578.40	5,810,878.50	5,572,893.40	95.9	-8.92	-545,685.00
1141	Երեխաների հիմնահարցեր	3,932,117.40	3,758,202.50	3,224,221.40	85.8	-18.00	-707,896.00
1145	Կանանց հիմնահարցեր, ընտանիքում բռնության և մարդկանց թրաֆիքինգի զոհերին աջակցություն	-	117,010.60	95,350.10	81.5	-	-
1153	Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր	112,243.20	112,243.20	103,814.50	92.5	-7.51	-8,428.70
1160	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում	1,744,649.00	3,133,234.80	2,271,383.60	72.5	30.19	526,734.60
1184	Ավանդների և այլ փոխհատուցումներ	1,136,250.00	757,500.00	754,924.20	99.7	-33.56	-381,325.80
1205	Սոցիալական ապահովություն	88,306,718.70	99,170,935.80	89,728,671.10	90.5	1.61	1,421,952.40
1206	Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումներ	932,239.30	-	-	-	-	-
1225	Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին	49,774,450.00	31,028,318.20	29,216,199.30	94.2	-41.30	-20,558,250.70

	տրվող սոցիալական աջակցություն						
--	----------------------------------	--	--	--	--	--	--